

Երևանի քաղաքի Կոմիտեի

# ԿՈՄԻՏԵ

## ՀԱՆԴԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1<sup>Ի</sup> ԵՒ 16<sup>Ի</sup>

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԹՈՒՄԲ

Ո. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ (Ա. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ)

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ, Մ. Գ. ՄՈՋԵԱՆ, Յ. Թ. ՀԻՆԴԻԵԱՆ, Յ. ՍԵԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԼԻՆԵԱՆ

Թի 6

16 Յուլիս

ՏԵՐԻՆ

ՅՈՎՀ. Թ. ԱՐԱՄԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
1894

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԻԵԱՆ

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ֆիզիկական գործունեություն

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

Ներքապաւոնություն եւ Հոգեպաւոնություն

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

Մանկավարժական ընթերցումք. — Պանդան

ԱԼՖՈՆՍ ՏՕՏԷ

Տրայիզոնի վարժարանաց խնդիրք

Երկրաւարժն ու դպրոցները

Լուրք եւ տեղեկությունք

Դպրոցն պատճառ կարճատեւութեան

Յ. Բ. ՀԵՆՐԻԿԱՆ

Մտածումներ — Տիպոքովեկի գործերէն փաղում

## Ա Զ Դ

Մասիսի խմբագրությունը պատրաստ է մասնաւոր յօդուածի կամ բղթակցութեան ձեւի տակ գոհացում տալ բոլոր անոնց՝ որք մասնաւոր նամակաւ բացատրություն կամ կարծիք խնդրեն իրմէ՝ դպրոցական խնդիրներու, մէթոսներու, կրթութեան ո՛ր եւ նիւղի վերաբերեալ դժուարութեանց եւլն. մասին :

Շնորհակալութեամբ կ'ընդունի եւ կը հրատարակէ նաեւ դպրոցական խնդրոց վրայ իրեն հաղորդուած շահեկան ու ամփոփ տեղեկություններ, ինչպէս նաեւ իր յատուկ աշխատակիցներէ դուրս ձեռնհաս ուսուցչաց կամ կրթական գործոց հետաքրքրուող ո՛ր եւ է կարող անձի կողմէ յղուած օգտակար գրութիւններ որ իր ծրագրին սահմանէն դուրս չեն ելներ :

# ԻՄԱՍԻՍ

## ՀԱՆԴԵՍ

### Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

43<sup>րդ</sup> Տարի \* Նոր շրջանի քիւ 6 \* 16 Յուլիս 1894

#### ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Բ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹԻՒՆ

(Շարունակորէն Նախորդ քիւն)

Բայց ինքնաբեր շարժմանց կարեւորագոյն շարք մը կայ որ բնագլխաւոր կը բացատրուի Բնագլխական շարժման կապակից, կանոնաւոր եւ գէշ ի նպատակ մը ուղղուած ինքնաբեր շարժմանք են, եւ այսու կը զանազանին միւս ինքնաբեր շարժումներէն. իսկ կամաւորներէն կը զանազանին այնու զի չեն ճանչեր կամ հազիւ կը ճանչեն նպատակն յոր կը ձգտին գրեթէ կուրորէն. Բնագլխաւոր շարժումը իւր բոժոժը կը շինէ, մեղուն իւր քշիշները, սարդը իւր ոտայնը, թռչունը իւր բոյնը, կուզը իր թռչուններն ու խուզերը. բնագլխաւոր ուղեւոր թռչունները կ'որոշեն իրենց մեկնման պահը եւ օդոց մէջէն կը գտնեն իրենց ճամբան, միջիւնները պաշար կը ժողվեն ձմեռուան համար եւ կ'ապրին ընկերութեամբ, չունն ու աղուէսը իրենց որսը կը պահեն, ինչ ինչ միջատք փոյթ ունին իրենց ձուերը գիականութեամբ վրայ դնելու, որպէս զի իրենց թրթուրները սնանին փտած մտով երբ ձու-

երէն դուրս ելնեն, թէ եւ նախորդ սերունդը չի ճանչեր իր յաջորդը, վասն զի ձուերուն ճաթելէն յառաջ մեռած է արդէն, եւ այլն: Բոլոր այս գործողութիւնք կ'ընծոտ, ճարտարարուեստ են, անվերջ կապակցութեամբ անխալ տանող գէշ ի որոշ նպատակ մը: Բայց չենք խորհիր բնաւ վերադրել զանոնք բանականութեան եւ խորհրդոյ, եթէ ոչ մեղուն ամէն ճարտարագէտներէ մեծագոյն ճարտարագէտ մը պիտի լինէր, ու ծիծառնը մեծագոյն նաւապետ մը քան ամէն նաւապետները: Բնական բերմամբ, կազմաւորութեան բնութեամբ, ներքին ընդածին ձգտմանց տեսլի տալով գործելու եւ զանախ մ'է այս, մէն մի տեսակի յատուկ եւ ընդ հանուր, ժառանգական ու անփոփոխ, անխորհուրդ, կոյր ու ճակատագրային, նպատակացն անդէտ այլ անվերջ, անկատարելագործելի այլ առջի օրէն կատարեալ, զոր կ'անուանենք քննադրում (instinct), եւ որոյ վարձանն է անհատին ու տեսակին պահպանութիւնը:

Բնագլխական գործունէութիւնը յատուկ է մանաւանդ. կենդանեաց, որոց մէջ շատ զարգացած է: Կան իմաստասէրներ որ կ'ըսեն թէ մարդը բնագլխական չունի բաւին բուն նշանակութեամբ, եւ թէ նա իմացականութեամբ ապրելու սահման-

ուած ու կարող ամէն ինչ ուսնելու՝ կը ծնանի առանց բան մը գիտնալու։ Արդարեւ մարդը, իմացական ու բանաւոր էակ, իր և ընկերութեան կեանքը պահպանելու միջոցները կը գտնէ ու կը գործադրէ իր փորձառութեամբ և խելքով, ու զանոնք տակաւ կը կատարելագործէ, տնկատն ու սեռն ալ տակաւ զարգանալով, բայց բնազդմունք ամբողջապէս չեն պակսիր մարդուն։ Ապրելու եղանակը սովորելէ յառաջ ապրիլ, ապրիլ սկսիլ պէտք է. ապրիլն է գործել, հետեւապէս ամէն փորձառութենէ և ուսումէ յառաջ պէտք է գործել, և առանց ուսման ու փորձոյ գործելն է բնազդական գործունէութիւնը։ Որչափ որ նոյն իսկ կենդանեաց բնազդումները Զանաւ մեկնել—որպէս բարեշրջական վարդապետութեան մէջ—իրբեւ տեսակին մէջ փորձառութեամբ կազմուած ու ժառանգականութեամբ փոխանցուած սովորութիւններ, միշտ ի սկիզբն ո՛ր և է կենաց պէտք է ընդունիլ ինչ ինչ բնազդումներ, որք կարելի ըրած ըլլան առաջին կենդանի էակին կեանքը։ Այսպէս նորածին մանուկը մօրն ստինքը ծծելու համար բնազդաբար կը շարժէ իր չրթունքն ու իր չրթներուն հետ երեսունեւերկու զոյգ դնդերներ։ Բնազդական շարժումներ կը կատարէ տղան նոյնպէս իր երկու աչքերը մի միակ տեսութեան մէջ զուգելու, իր երկու ոտքերը փոխ առ փոխ համաչափ շարժելու համար, եւն։ Բայց, յիրաւի, բուն բնազդական գործունէութիւնը, և այն դարձեալ անկատար կերպով՝ բաղդատմամբ կենդանեաց բնազդներուն, մարդուն վրայ կ'երեւի կենաց առաջին օրերուն մէջ միայն ու փոխանցական վիճակ մը կը ներկայացնէ։ Մարդուն բնազդմունք իր զգայնութեան յօժարութիւնքն ու իր բանականութեան պէտքերն են յաւէտ աշխատնք, թէ և ձգտմամբ անհամեմատ գերազանց կենդանեաց բնազդներէն, չունին այս վերջնոց անվրիպելի գործնականութիւնը, ու իր վրայ աւելի բարձրագոյն գործունէութեան մ'առիթ ու նիւթ են, աւելի իր ճակատագիրն

յայտնող նշոյլներ ու գրդումներ իր մտաց ու կամքին համար, ինչպէս ըսինք վերը, քան գործելու որոշ, կանխորոշ ու բռնամուղ ուղղութիւններ։ Արդէն իմացականութիւն ու բնազդում խոտոր կը համեմատին միմեանց. որչափ մին աւելի է այնքան նուազ է միւսն։ Այս խոտոր համեմատութիւն կը տեսնուի արդէն կենդանեաց մէջ, ուր բարձրագոյն տեսակներուն՝ որք աւելի օժտուած են իմացականութեամբ՝ բնազդմունք ո՛չ այնքան բազմաթիւ են ու ո՛չ այնքան զարմանալի որքան ստորին տեսակներուն, զոր օրինակ միջատաց։ Ուրեմն ո՞րքան աւելի այս խոտոր համեմատութիւնը պիտի ըլլար մարդոյն մէջ, որ երկրի վրայ գերազանցապէս իմացական էակն է, բանաւոր ու բարոյական էակը, որուն գործելու յատուկ կերպն է կամաւոր ու խորհրդածեալ գործունէութիւնը, այսինքն այն որ, պայծառօրէն գիտակցական, ի գործ կը դրուի յստակ տեսութեամբ նպատակին ու միջոցաց, քննութեամբ առնելի գործոց և ընտրութեամբ մը զոր ազատօրէն ընելու գիտակցութիւնն ունինք։

Ըսինք թէ այդ գործունէութեան յամբարար կը բարձրանայ մարդը, բայց ճատ կանուխէն ալ անոր առաջին փորձերն ընել կ'սկսի մանուկը, առաջին Զանքերը դուրս ելնելու զուտ բնազդական ու ֆիզիքական կեանքէն։ Երբ իր զգայնութիւնը կ'սկսի զարգանալ, բաղձանքներ երեւան կուգան իր մէջ որք կը մղեն զինքը գիտակցարար ու նպատակաւ շարժումներ ի գործ դնել զանոնք զսկացնելու համար։ Այսպէս արդէն 4-5 ամսու մանկիկը ձիգեր կ'ընէ բռնելու զինքը հրապուրող առարկան, կը պոռայ կանչելու համար, բուն կերպով կը նետուի դէպ ի ստնտուն, գլխու շարժումներ կ'ընէ դէպ ի դուռը՝ դուրս ելնել ուզելն յայտնելու համար, եւն։ Մանկան քալելու և խօսելու ձիգերուն մէջ բնազդական դրդմանց կը միանան յաջողելու բաղձանքը, նմանողութիւն, ուշադրու-

թիւն, զգուշաւորութիւն, որք զգացման և իմացականութեան գործակցութիւն կ'ենթադրեն ու արդէն կը կրեն յայտնի հանգամանքներ կամաւոր գործողութեան: Նոյն յատկութիւնք կը պարզուին մանկական խաղուց մէջ, որք արդէն մշտաւոր աշխատութիւն մ'են տղայոց համար և մարզանք մը մտածման ու կամայ: Երկու երեք տարեկան տղայք ընդունակ են նոյն իսկ իրենց բաղձանքին հակառակ իրենցմէ պահանջուած գործ մը կատարելու, անձնարգելումներ ընելու, ծնողքին հաճոյք պատճառելու, խոստացուած վարձք մ'ստանալու կամ սպառնացուած զրկումէ մ'ազատելու համար, ինչ որ բաւական զօրաւոր կամեցողութեան մը գործ է արդէն, ու յաճախ երկար վարանումներէ յետոյ առնուած որոշման մը բոլոր դժուարութիւնն արժած է: Տղայոց մտահաճութիւնք ու խեղութիւնք եւս եղանակներ չե՞ն որովք անոնց նորածին կամեցողութիւնը ինքզինք կը փորձէ ու ինքզինք հաստատել կը ջանայ ծնողաց կամքին առջեւ:

Կամաւոր գործունէութիւնը, իր այս առաջին շրջանին մէջ, սահմանափակ դաշտ մ'ունի. շարժմանց, ձեւերու, դէմքի կամ լեզուի արտայայտիչ նշաններու վրայ ի գործ կը դրուի մանաւանդ. ֆիզիքական գործողութիւններ են աւելի զորս կ'առնու իր իշխանութեան տակ, մեքենական ու բնազդական գործողութեանց թիւը նուազեցնելով: Կամաց կամաց մտաւորական գործողութեանց վրայ ի գործ պիտի դրուի խորհրդածութեամբ և ուսումնասիրութեամբ, և իր շարժառիթներուն մէջ պիտի մանէ բարոյական շարժառիթը, ու անոնց բազմութիւնը—մանկան շարժառիթը յաճախ մէկ գաղափար մը կամ տենչ մ'է—յառաջ պիտի բերէ երկար նախաքննութիւն, որով պիտի ըլլայ բուն բանաւոր ու բարոյական գործունէութիւնը սղատակամ էակին, մարդուն:

սենք նաև որ ֆիզիքական շարժումնք ի գործ կը դրուին նաև կենաց մէջ ստացուած սովորութեամբ, և այս նոյն իսկ կենաց առաջին տարիներէն սկսեալ: Ամէն գործողութիւն անգամ մը կատարուելէ յետոյ՝ կրկնուելու ձգտում մ'ունի, և որքան կրկնուի՝ ա՛յնքան այդ ձգտումը կ'աւելնայ, և յայնժամ կ'ստանանք արամադրութիւն մը այդ գործողութեան կատարումն ինքնաբերաբար յառաջ բերելու և աւելի դիւրութեամբ ու աւելի վստահութեամբ: Այդ կազմուած տրամադրութիւնը սովորութիւնն է, որ երկրորդ բնութիւն մը կ'ըլլայ մեր մէջ, ստացական բնազդում մը, ունենալով անոր մեքենականութիւնն ու անվրէպ ապահովութիւնը: Այսպէս, ինչպէս ուրիշ գործողութեանց մասին, ֆիզիքական գործողութեանց ունակութիւնք կը հաստատուին, և ինչ որ ի սկզբան նպատակաւ կամ աննպատակ՝ այլ զժուարաւ կատարուած պատահական շարժումներէն, կ'ըլլան սովորական և հեշտ: Զգայարանաց կիրառմանք, գնացք ու վազք, խօսք, երգ, գիր և ընթերցում շուտով կը դառնան մանկանց վրայ սովորութեան գործողութիւնք զորս կը կատարեն գրեթէ առանց մտածելու:

Դ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

## ՆԻԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ԵԻ

## ՀՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ (\*)

Ազնիւ Սանունք իմ՝ ուսումնաւարտք, — ահա՛ վերստին կը բացուին Պէրպէրեան վարժարանին դրունք, եւ դուք էք որ կ'երեւիք անոր սեւոյց վրայ՝ պատրաստ նեւտուելու ընկերութեան ծոյցին մէջ, ա՛յ այսուհետեւ անոր կազմիչ ու գործիչ տարրերէն ըլլալու համար: Խորհրդաւոր,

(\*) Հռաք քանի, զոր Պէրպէրեան վարժարանի Տնօրէնն ուղղած է իր այս տարւան շրջանաւարտաներուն:

Վերջացնելու համար այս գլուխը, ը-

յուզումնալից է այս վայրկեանը, ինչպէս ամէն ծննդեան վայրկեան: Վեց նոր հոգիներ էք որ կը ծնիք ահա բարոյական, ընկերական աշխարհին մէջ:

Երկրորդ ծնունդ մ'է այս, այս անգամ ո՛չ միայն իբրեւ կենդանի էակ մը ապրելու համար, այլ իբրեւ բարոյական էակ մը, իբրեւ անգամ մ'ընկերութեան, իբրեւ գիտակից էութիւն մ'ի բնութեան եւ իբրեւ աջակցող մը տիեզերական կարգին: Բայց ինչպէս առաջին ծնունդներուն, նոյնպէս եւ այս երկրորդ ծնունդներուն մէջ քանի՜ վիժումներ կան, քանի՜ այլանդակութիւնք, քանի՜ ընդածին հաշմութիւնք եւ օխտաւորութիւնք, երբ գարոյցը չի ճանչեր իր կոչումը, երբ իրեն յանձնուած էակներուն մէջ կ'անտեսէ հոգին՝ նիւթը միայն տեսնելով, կը մոռնայ մարդը՝ կենդանին միայն յիշելով:

Խիղճս գոհ, եւ սիրտս վստահութեամբ եւ յուսով լի, կ'առաջնորդեմ ձեզ այս նոր կեանքի մուտքը. գիտակցութիւնն ունիմ թէ իմիջսանն կատարած եմ դաստիարակի պարտականութիւնքս զորս ստանձնած էի ձեզ նկատմամբ, եւ թէ դուք հասունցած կը ծնիք այս նոր կեանքին:

Չէ՛, արշալոյսներ էք որ չպիտի պատուէք՝ մութի մէջ թաղուելով յեղակարծ: Առողջ ծնած հոգիներ էք դուք բարոյական եւ ընկերական կեանքին համար. կրնան ծախի զարնել ձեզի երկիրը եւ Ագգը, ընդունելով զձեզ իրենց գրկին մէջ:

Դուք գիտէք արդէն, երբ կեանք կ'ըսենք՝ մարդկային էակին յատուկ, անոր արժանի՛ կեանքը կը հասկնանք: Արդարեւ, կեանքը շնչելն է մարդուն համար. — բայց բոյսք եւս կը շնչեն. ուտելը, յագենալը, քնանալն է. — բայց անասունք եւս կ'ուտեն, կը յագենան, կը քնանան: Ո՛չ, մարդուն յատուկ կեանքը իրեն յատուկ գործունէութեան, իրեն յատուկ կարողութեանց կիրառման, իրեն յատուկ ձգտմանց գոհացման մէջ է. իրեն յատուկ գործունէութիւնը՝ բանաւոր ու կամաւոր գործունէութիւնն է, իրեն յատուկ կարողութիւնք՝ իւր հոգեկան կարողու-

թիւնքն են, եւ իր յատուկ ձգտումներ իր իղձքն ու սլացքն են դէպ ի ճշմարտութիւն, դէպ ի բարութիւն, դէպ ի սէր, դէպ ի գեղեցկութիւն, դէպ ի կատարելութիւն: Ահաւասիկ մարդը, անոր առանձին բնութիւնը, ահա՛ եւ անոր կենաց վախճանը, անոր ճակատագրին օրէնքը, անոր բարին յոր սլարտի ձգտիլ միշտ, եթէ չուզէ անկնիլ իր բարձրութենէն, եթէ չուզէ խոնարհիլ յանասնութիւն, ի բուսականութիւն:

Այն հայեացքն որով կ'ըմբռնենք մարդկային եսին բնութիւնը եւ անոր վախճանը՝ վճռական ազդեցութիւն ունի մեր կեանքի ընթացքին վրայ. եւ գիտէք որ կայ նիւթապաշտական հայեացքը եւ հոգեպաշտական հայեացքը, սրբ կը բաժնեն զմարդիկ տեսականին ու գործնականին մէջ. այո՛, գործնականին ալ մէջ, վասն զի սոքա լոկ հայեցողական վարդապետութիւնք չեն, այլ իրարմէ տարբեր որոշ ուղղութիւններ կենաց մէջ:

Անհատին եւ ընկերութեան կեանքին վրայ նիւթապաշտական գաղափարաց ազդեցութիւնը նուաստացուցիչ, անբարոյացուցիչ, յուսահատեցուցիչ, աղիտաբեր է: Նիւթապաշտ վարդապետութեան տեսակէտով՝ նիւթ է լոկ մարդը, նիւթական զօրութիւն մ'է միայն այն զոր հոգի կ'անուանեմք, նիւթին երեւոյթներն են լոկ մտածում, զգացում, կամեցողութիւն: Խորհուրդը ուղեղին մէկ արտաթորումն է, որպէս մաղձը՝ լեարդին. զգայնութիւնը՝ նիւթին հակազդեցութիւնը, ջղին թրթռումը արտաքին կամ ներքին ներգործութեանց դէմ, իսկ կամքը՝ դէպ ի ջղերու հաճոյքը մեքենական, կոյր ու անգիմագրելի բերում մը: Նիւթապաշտին համար՝ որպէս հոգին բացակայ է մարդուն մարմնէն, նոյնպէս եւ Աստուած բացակայ է տիեզերքէն. կոյր ու անգիտակից նիւթն է որ իր խուլ ձգտումներով առած է ձենն այս տիեզերաց, որ բնաւ գաղափարի մը չի հպատակիր, բնաւ իմացականութենէ մը չի վարիր, բնաւ վախճանի մը չի դիմեր: Եւ այս վարդապետութիւնը կը կարծեն ըլ-

լալ գիտական կրթութեան մ'անհրաժեշտ հետեւանքը, այս դրական ու փորձառական գիտութեանց դարուն անխուսափելի հաւատքը:

Այս վարդապետութիւն, տեսաք գուր, չի կրնար բացատրել ինչ որ կայ մեծութիւն մարդկային էակին վրայ, և ինչ որ կայ կարգ և ներդաշնակութիւն բնութեան մէջ, և միակ բարոյականը որուն կ'առաջնորդէ՝ զգայարանաց հաճոյքի ու դրամի պաշտաման բարոյականն է, որ մարդը մտն ու զազրութեան մէջ կը թաղէ ու ամէն արժանապատուութենէ մերկացած՝ ծնկան վրայ կը դնէ Ոսկիէ Հորթին առջև: Ի՞նչ. նիւթն է որ գիտակցութիւնն ունի ինքզինքին ու կը խորհի, կը դառէ, կ'իմաստասիրէ. ա՜ն է որ գեղեցկին կը ցանկայ ու բարւոյն կը համակրի, որ կը սիրէ, կը զոհէ, կ'անձնուրի. ա՜ն է որ ազատ կ'զգայ ինքզինք ու միանգամայն բարոյական օրէնք մը կը յղանայ սրուն հնազանդիլ պարտական կը դառնի իւր անձ. ա՜ն է որ անհունին վրայ կը մտածէ, բացարձակը կը վճռէ, տեսլականին յղացումն ունի ու կատարեալին բնագոր: Ա՜ն է որ բիւրեղին մէջ երկրաշափութիւն է, ծաղկին մէջ՝ գեղարուեստ, կենդանոյն մէջ՝ բնագոյ: Բայց դժբախտաբար, հակառակ իր յաւակնութեանց անհեթեթութեան, տառնուութեւրդ դարէն ի վեր մանաւանդ, Տ'Օլպաիներէն ու Լամէդրիններէն ի վեր, որք հին Հիւլէականաց ու Եպիկուրեանց գաղափարներուն ցաւալի թարմացում մ'ընծայեցին, նիւթապաշտ վարդապետութիւնը ինչ աւերիչ արշաւանքներ ըրաւ իմացականութեանց և խղճերու մէջ, երկինք նայող ու հո՛ն յոյս մը փնտռող աչքերը խոնարհեցուց, նկարագիրները ստորնացուց, գրագիտութիւնը ապականեց, բանաստեղծութեան Մուսայն երկրաքարէ նուաստացուց և Արուեստին մաքուր պատկը տիղմի մէջ քաշկռտեց:

« Փախէք անոնցմէ, ըսել կուտար Ռուսօ Սովուացի երէցին առ երկտասարդն որուն իր հաւատոյ դաւանանքը կ'ընէր, փախէք անոնցմէ որք, զբնութիւն բա-

ցատրեւու պատրուակաւ, տխրաբոյր վարդապետութիւններ կը ցանեն մարդոց սրտերուն մէջ... գոռազամիտ պատրուակին տակ թէ իրենք միայն լուսամիտ, ճշմարիտ, անկեղծ են, կը հրամայեն մեզ հպատակիլ իրենց հատու վճիռներուն, և կը յաւակնին մեզ տալ, իրրեւ ճշմարիտ սկզբունք իրաց, այն անիմանալի դուրսութիւնքն զորս իրենց երեւակայութեան մէջ կերտած են: Բաց աստի, տասալելուվ, քանդելուվ, առաթուր կոխելուվ ամէն ինչ որ մարդիկ կը յարգեն, վշտացեալներէն կը բառնան իրենց հուսուածեան յետին միթիթարանքը, հարուստներէն իրենց կրքերուն միակ սանձը. սրտերու խորէն կը խլեն ոճրոյ խայթը, առաքինութեան յոյսը, և կը պարծին ըլլալ մարդկային ազգին բարեբարները: »

Հոգեպաշտ իմաստասիրութեան հայեա՛ցն է որ լաւագոյնս կը բացատրէ մարդն ու բնութիւնը, որ, ինչպէս Ռաֆէսօն կ'ըսէ, ստորինը կը մեկնէ գերագունով, մինչդեռ նիւթապաշտութիւնը գերագոյնը կը մեկնէ ստորնով, — որ տիեզերքին մէջ անհուն իմացականութիւն մը կը տեսնէ, օրէնսդիր ու նախախնամ, ու մարդոյն մէջ անոր մէկ մասնիկը, հոգին, էութիւն աննիւթ, որ իր բանականութեան մէջ բան մ'ունի անոր բացարձակութենէն, իր ձգտմանց մէջ բան մը դէպ անոր կատարելութիւնը, իր խղճին մէջ արձագանգ մ'անոր արդարութեանն ու սիրոյն: Մարդը առօրեայ երեւոյթ մը չէ, գոյութեան ովկէանին վրայ կազմուած ու ընդհուպ լուծուելու սահմանուած փոփոխ մը. իր անձին ամենէն ներքին ու խոր ընդդէմներովը կը հակառակի այս տեսութեան. նիւթին յարայեղ փոփոխութեանց մէջ անանց ու անմահութեան ըզձատենչ սկիզբ մը կ'ըզգայ յինքեան: Քանդ, որ իրրեւ սկեպտիկ մը նկատուած էր, չէ՞ր բռնադատուած պակայն գոչելու. « Երկու բաներ կը լնուն հոգին հիացմամբ մը և սլաոկառանքով մը որք միշտ կը վերածնին ու կ'աճին, քանի միտքը աւելի յաճախ դառնայ անոնց ու զբաղի անոնցմով. — աստեղա-

զարդ երկինքը մեր վրայ, բարոյական օրէնքը մեր մէջ, մեր ներսիդին:» Եթէ մին, կ'ըսէր, աշխարհներու անհամար այն բազմութեան տեսիլը կը չքացնէ գրեթէ իմ կարեւորութիւնս իրրեւ կենդանի արարած, միւսն, ընդհակառակն, «յանհունս կը բարձրացնէ իմ արժէքս իրրեւ իմացականութիւն, իմ անձնաւորութեամբս որուն մէջ բարոյական օրէնքը ինձ ի վեր կը հանէ անասնականութենէ և նոյն իսկ բոլոր զգայական աշխարհէն անկախ կեանք մը, այնքան գէթ որքան կարելի է դատել այդ օրինաց իմ գոյութեանս սահմանած ճակատագրովն, որ ոչ թէ այս կեանքի պայմանաց ու սահմաններուն մէջ կ'ամփոփուի, այլ յանհունս կը տարածուի:» Հարկ է հոս յիշեցնել փիլիսոփայութեան բոլոր այն մեծ անունները, Սոկրատ, Պլատոն, Արիստոտել, Պըրդին, Կիկերոն, Սենեկ, Մարկոս-Աւրելիոս, որք հնութեան մէջ, և Տէքարդ, Բասքալ, Լայպնից, Ռուսօ, Ռօսյէ Գոլլըր, Հէկէլ, Ժոֆիուուա, Վիկտոր Գուգէն, և այլք որք արդի ժամանակաց մէջ, տարբեր ձեւերու տակ, քարոզեցին աննխախտականութիւնը հոգւոյն և անոր բարձր ճակատագրերն հռչակեցին:

Դրական և փորձառական գիտութեանց բաւական ընդարձակ ծանօթութեան մը հետ հոգեպաշտական իմաստասիրութիւն մ' ուսուցողեցաւ ձեզ ատտ. և տեսաք թէ այդ գիտութիւնք կը հակառակէին հոգեպաշտական ըմբռնման. — երբեք ընդհակառակն, անոնք աւելի եւս ի վեր կը հանէին հրաշալիքը բնութեան, գերագոյն Արուեստագէտին վրայ հիացումը կը բազմապատկէին, և ոչ թէ քանդելու՝ այլ աւելի եւս զօրացնելու կը ծառայէին կրօնական զգացումը որ ամէն մարդու սրտի խորը կը հանգչի: Այդ ազնիւ իմաստասիրութեան լուսովն ուսումնասիրեցինք հին և նոր մատենադրութիւնները, գեղեցկագիտութիւնը, և բարոյագիտութիւնը, ու միշտ տեսանք որ ճշմարիտն ալ, Գեղեցիկն ալ, Բարին ալ բացարձակին ու կատարելին մէջ ունէին իրենց արմատները, և թէ երեքին

եւս լուսեղէն ճառագայթներ էին որ զմեզ մեծ կեդրոնին հետ կը միացնէին, յԱստուած կը հանէին մեր միտքը, անհունին հետ մեր հոգւոյն առնչութիւնը կը յայտնէին: Ամէն ծանօթութիւն յարաբերական է, ըսին. դուք տեսաք, մեծ մտքերու հետ, որ եթէ յարաբերականը բացարձակը չունենայ իրեն հիմ, ամէն գիտութիւն ցնորք է: Գեղեցիկը զգայարանաց հաճելին է, ըսին. դուք տեսաք որ ինչ որ գեղեցիկ կը գտնեմք ու կը կոչեմք՝ կատարելին մասնակի մէկ մարմնացումն է, աստուածային կատարելութեանց—անհուն իմաստութիւն, անհուն բարութիւն, անհուն կարողութիւն — մէկ ցոլքն է իրականութեան մէջ կամ գաղափարին: Բարին հաճոյքն է կամ օգտակարը, ըսին. դուք տեսաք որ բարին պարտականութեան կատարումն է, և պարտականութիւնն է հաւատարիմ կենալ մեր բանաւոր ու ազատակամ բնութեան, յարգել զայն ի մեզ և յայլ, մնալ բարոյական կարգին մէջ, Արդարութեան և Սիրոյ օրէնքին հպատակ, մարդկային բնութեան գաղափարականին աղնդէտ, վերին Դատաւորի մը յետին ու գերագոյն վաւերացմանը վրայ հաւատալից:

Եւ ո՞ւստի են այդ սկզբունք, ո՞ւր գրուած են անոնք, եթէ ոչ նոյն իսկ մեր մէջ, մեր հոգւոյն մէջ, մեր բանականութեան և սրտին խորը գրոշմուած են անոնք: միայն՝ հոգեպաշտք լաւագոյնս կը վերլուծեն հոգին զոր նխապաշտք կը ծայրատեն, կ'անտեսեն:

Այն սրտագին ունկնդրութիւնը զոր կ'ընէիք այս դասերուն, այն խանդավառ ծափերը որովք կը պսակէիք անոնց աւարտումը, կը ցուցնէին թէ նոքա կը պատասխանէին ձեր ներքին զգացումներուն, ձեր սրտին ու բանականութեան բնազդներուն. իսկ քննութեանց մէջ, այն համոզեալ ու խորհրդածող մտքի շեշտը, որով ներկայից առջև խօսեցաք այս խնդիրներուն վրայ, ապացոյց մ'են թէ տողորուած էք այս ազնիւ սկզբունքներով: Անոնք իրենց բարերար ներգոր-

ծովթիւնը պիտի ունենան ձեր կենաց և գործունէութեան ուղղութեան վրայ, վասն զի որչափ նիւթապաշտական գաղափարք ստորնացուցիչ ու մահարոյր են մարդկութեան համար, ա՛յնքան հոգեպաշտականք բարձրացուցիչ, սրտապընդիչ, շինիչ ու կենսարոյր են: Անոնք մարդը իր արժանաւոր դիրքին մէջ կը դնեն տիեզերաց մէջ, անոնք կ'ուսուցանեն ո՛րն է մարդկային էակին արժանի կեանքը, և ի՞նչ պարտի լինել կենաց ճշմարիտ նպատակը:

Դուք, գիտակ մարդու կոչման մեծութեան, պիտի ուզէք արժանի ըլլալ անոր, պատուել մարդը ձեր մէջ, մեծցնել բարձրացնել զայն: Լուսաւոր է ձեր բանականութիւն, պիտի լուսաւորէք զայն միշտ առաւել. «Լո՛յս, աւելի՛ լոյս» գոչեց մահուան ճգնաժամուն ալ մեծն Կէօթէ, և այդ պիտի ըլլայ միշտ ձեր հոգւոյն աղաղակը, ճշմարտութեան փեմ ծարաւով միշտ պապակած ձեր հոգւոյն: Դուք արդէն նիւթական օգտակարութեան տեսակէտը չէր որ ունէիք ձեր աչաց առջև, երբ ցայս վայր շարունակեցիք ձեր ուսումներ, այլ յազուրդ մը տալ ուզեցիք ձեր հոգւոյն պէտքերուն, որ կը սիրէր ընդլայնել իր հորիզոնը. ուսաք ուսնելու համար, գիտնալու համար, տակաւ աւելի մխրճելու համար լուսոյն մէջ ձեր մտքին թեւեր: Եւ այդ վայրկեանէն հոգեպաշտներ էիք. ճշմարտին բացարձակ արժէքը կը դաւանէիք, կամք մ'ունիք դուք, անձնիշխան, աղիկամի. ու գիտէք թէ մարդկային անձնաւորութեան ու բարոյականութեան պայմանն ու էութիւնն է այն. ու ամէն գործունէութիւնն է որ մարդ մը կ'ընէ զմեզ, վեր բարձրացնելով զմեզ նիւթոյն ճակատագրականութենէն ու կենդանւոյն բնագդականութենէն, ու այդ կամեցողութիւն, իւր ազատութեան մէջ բարոյական օրինաց ենթակայ, պարտաւոր է ըլլալ ընտիր, ազնիւ, բարի, որ բարոյական մարդուն արժանի կամեցողութիւնն ըլլայ: Այդ գործիքն է մեր՝ արժանեաց

ստացման. այդու կրնանք նկարագրի տէր մարդ ըլլալ, և ոչ թէ մէն մի հովի տատանող եղէգ մը զաղխաղիւն, շիւղ մը հողմավար: Դուք ճանչցաք մեր արժանաւորութեան այդ յատկանիշը, այդ պայմանը, հոգւոյն այդ իտիւթիւնը. և, արդէն յաղթելով ի ձեզ նիւթոյն յոյլ ու հեշտամուլ թեւագրութեանց, տարիներ շարունակ ելաք առտուն՝ երբ պարտաւորութեան ձայնը յաշխատութիւն կը հրաւիրէր զձեզ, կամ յօժարաւիոյթ կ'որգեցիք զձեզ խաղէն կամ զբոսանքէն: Այդ կամքը, բանականութեամբ լուսաւորուած ու պարտականութենէն ուղղուած այդ բարի կամեցողութիւնը ունենալ պիտի ջանաք դուք միշտ: Դուք սոսկմամբ պիտի խորշիք բոլոր այն վատթար ու անարդ վիճակներէն ուր մարդը, կրքէն ընդ քարշ տարուած ու մոլութենէն կնատած, ա՛լ ինքզինքին տէրը չէ, ա՛լ անձ մը չէ՝ այլ գերի մ'է, ա՛լ մարդ մը չէ՝ այլ անասուն մը, ա՛լ հոգի մը չէ՝ այլ նիւթ մը: Կը տեսնէք թէ նիւթապաշտութիւնը և հոգեպաշտութիւնը լոկ վերացեալ դրութիւններ չեն, ու մարդ կրնայ վերացեալ տեսութիւնը ունենալ կամ ո՛չ, և գործնականին մէջ հակիլ յայսպէս կամ յայն, ի նիւթն կամ ի հոգին, ի նիւթն հակիլ՝ նոյն իսկ վերացապէս հոգեպաշտական սկզբունքներ դաւանելով, որպէս բազումք, որով կը հասկցուի թէ ո՛րքան կարեւոր է մեր վարմանց ու գործունէութեան մէջ ցոյց տալ թէ հոգեպաշտ վարդապետութեան հետեւողներ ենք: Դրամին տարապայման սէրը նիւթապաշտութիւն մը չէ՞. ի՞նչ նուաժանացումներ կը հարկադրէ այն հոգւոյն, ի՞նչ աղտեր պատուոյն, ի՞նչ սեւութիւններ խզճին. կը ստէ, կը նենգէ, կ'ուրանայ, կը խարդաթէ, անուն ու համբաւ կ'ուրատաւորէ, տուն ու տեղ կը կործանէ, աղքատին քրտինքն ու արցունքը կը խմէ դրամապաշտը, որպէս զի տիրանայ իւր սիրոյ առարկային. և ի՞նչու այդ տարապայման սէրը. — որպէս զի վայելէ, հաճոյք, նիւթական հաճոյք վայելէ, շատ, կարելի եղածին չափ շատ վայելէ, քիմ-

քը գոհացնէ, անձը պարարէ կամ մարմինի զարդարէ: — դա՛րձեալ նիւթապաշտութիւն: Ո՛չ, դուք չպիտի երկրպագէք այդ կուռքին որ կը նուստատացնէ հոգին, անխիղճ անպատիւ գերիները չպիտի ըլլաք դրամին: Հոգւոյն վայելքը ամէն բանէ վեր պիտի դնէք որ հանդարտ խղճին ու առաքինութեան կ'ընկերանայ, և սրտին անարատ օսկին ո՛ր և է թանկագին մետաղէ նախամեծար պիտի ընտրէք: Պիտի հոգաք դուք ձեր մարմինը, զայն առողջ պահելու և առողջ գործելու պիտի ջանաք միշտ, բայց ո՛չ մարմինը պիտի սիրէք մարմնոյն համար, որ նիւթապաշտութիւն է, այլ մարմինը պիտի հոգաք հոգւոյն համար, որուն գործիքն է, որուն տաճարն է, և հոգին է նպատակն ու մարմինը միջոց մը: Երբ հոգւոյն մեծութիւնը կ'ըմբռնէ ոք, ահա՛ այն ատեն է որ կ'ըմբռնէ նաև անբռնաբարելի հանդամանքը բոլոր մարդկային հոգիներու, իր պարտքն յարգելու մարդկային անձը բոլոր իր նմանեաց վրայ և անոր զարգացումն ու երջանկութիւնը վախճանելու յամենեան, իրեն ամենուն փղբայր ու համակիր հոգի մը: Եւ աստի՜ բոլոր արդարութեան և բոլոր սիրոյ պարտաւորութիւնքն զոր ունիմք առ մեր նմանիս: Պարտաւորութիւն: այս բառն ունի՞ նշանակութիւն յաչա նիւթապաշտին: պարտաւորութիւն առ ո՞, և առ ի՞նչ, երբ նիւթ եւեթ է ամենայն, և երբ ի վախճանի ամենայն ինչ կը լուծուի ի մոխիր, և անդր քան զայն չիք ինչ: Եւ բարոյական մի այսպիսի վարդապետութիւն ժխտումն իսկ է բարոյականին, ա՛յնքան ստոյգ է որ ճշմարիտ բարոյականութիւն մ'անբաժան է հոգեպաշտ իմաստասիրութենէ: Չգիտեմ թէ նիւթապաշտական բարոյական մը յանուն ո՛ր սկզբան պարտի քարոզել թէ այլոց իրաւունքը նուիրական են, եւ յանուն ո՛ր սկզբան պարտասիրիչ հռչակել սէրն ընկերին, անձնասիրութիւնն այլոց բարոյն, հասարակաց օգտին: Այդպիսի բարոյական մը, որ ետեւութեան բարոյականն է, իւր ամենէն զարգացեալ ձեւին մէջ Շա-

հու բարոյականը միայն կրնայ ըլլալ, որու համար արդարութիւնը խոհեմութիւն մ'է, և բարերարութիւնը տոկոսի դրուած գումար մը: Եւ ահա է՛ր նիւթապաշտ դարու մը և ընկերութեան մը մէջ, որպէս դժբախտարար ստիպում եմք յաճախ կոչել արդիքն, շահու այն հեւ ի հեւ հրատենչ հետամտութիւնը, և այն կոյր ու թալկացուցիչ պաշտարը շահուց, ուր ոտնակոխ կը կորնչին պատիւ, խիղճ և գութ, ուր յաջողութիւնը, հաւնիքն է՝ մի միակ նպատակ: — և ահա՛ ինչո՞ւ համար, նաև, ամենէն ազնիւներու կողմէ իսկ, միակ անյաջողութիւն, յուսահատեցուցիչ պարագայ համարել նիւթական առաւելութիւններէ զրկումը:

Յուսահատութիւն, Յուստեսութիւն ... ահա՛ բառեր ալ որք ա՛յնքան յաճախ կը կրկնուին մեր դարուն մէջ, որ արդարեւ մեր դարուն մէջ ծաւալած բարոյական հիւանդութիւններ կը յայտնեն, որոց տխուր գոհերը շատ անգամ առիթ կ'ունենամք տեսնելու: Ու ասոնք ալ ի՞նչ են, եթէ ոչ հետեւանք մի՛ և նոյն նիւթապաշտական գաղափարաց և ոգւոյն արշաւանաց: Հաճոյքին միայն ուշադիր, որ միայն զգալի է նիւթոյն, և այն զգալականին մանաւանդ, Յաւը, Զրկումը կը գրգռէ, կ'ընդվզեցնէ, կը յուսահատեցնէ շատերը: Կ'անգոսնեն նախ հոգւոյն հաճոյքները որք բարձրագոյն են անշուշտ և որք կրնային ու պարտէին միտիթարել գիրենք նիւթական զրկումներէ ու մարմնոյ տառապանքներէ: զոր օրինակ, մտօք զարգացեալ բայց աղքատիկ երիտասարդ մը չպարտի երբեք, ըստ իս, նախանձ բերել հարուստ՝ այլ ազէտ մարդու մը: Երկրորդ, կարի կը մոռնամք թէ հաճոյքը չէ կենաց նպատակը — մանաւանդ հաճոյքն հոսկոյնած իր անձկագոյն իմաստով —, այլ բարին: il ne s'agit pas d'être heureux, mais d'être parfait, կ'ըսէր, կը յիշէք, Ռենան ա՛յնքան գեղեցիկ կերպով և ա՛յնքան վեհ ըմբռնմամբ մը կենաց նպատակին — Բայց բոլոր ասոնք կ'ենթադրեն բար-

ծրագոյն իտէալ մը կեանքի, բարձրագոյն ըմբռնում մը մարդոյն բնութեան և հոգւոյն, բարձրագոյն գաղափարական մը բարոյական բարւոյ, և ի վերջ ամենայնի հաւատք մը յԱստուած, զերագոյն օրէնքի բարոյական օրինաց օր մեր մէջն է, և զերագոյն արդարութիւն օր կը տեսնէ մրցանքն արդարին ու իրեն կը վերադարձնէ վերջնական ու կատարեալ միաւորութիւնը առաքինութեան և երջանկութեան: Ու բոլոր ասոնք կ'ուրանայ Նիւթապաշտ իմաստասիրութիւնը, ու բոլոր ասոնք կը դաւանի և կ'ուսուցանէ Հոգեպաշտ իմաստասիրութիւնը, օրուն արմատները կը զուգայտունին Կրօնքին արմատներուն: Նա կը փակէ անձուկ մեր ճակատագրի հորիզոնը, սա կ'ընդլայնէ անհունութեան մէջ: Է՞ր սահմանափակիլ կեանքին մէջ ու հոգաբնոյն, մինչ մեր հոգւոյն ճակատագիրը չեն թուիր երբեք սահմանափակիլ անձուկ ժամանակին ու միջոցին մէջ, մինչ մեր ներքին ու վերջին բնագոյննք հեռու՛ն հեռու՛ն ու վերը վերը կը տանին զմեզ:

Դուք, ազնիւ երկտասարդք, ձեր դաստիարակութեամբ, ձեր առողջ ու վեհ համոզումներով և ձեր զարգացեալ ազնուատենչ ձգտումներով, զերծ պիտի մնաք այդ անձուկ տեսութիւններէն, հաճոյքի և շահու այդ տխուր բարոյականէն, Նիւթին ու եսին այդ կոշտ պաշտումէն: — Դուք ձեր աչքը մարդկային հոգւոյ կատարելութեանց գաղափարականին յառած, կեանքը կատարելագործման պայմանը, պարտուց կատարման ասպարէզ մը նկատելով, պիտի ուզէք երթալ, բանավար, բարենկատ ու գեղատենչ կամքի մը կորովով, միշտ յառաջ, միշտ ուղիղ, միշտ վեր, արդիւնարար աշխատութեամբ օգտակար ընծայելով ձեր կարողութիւնքն ու տաղանդներ, արդարութեանն ու պարկեշտութեանն անստերիւր, սիրոյ և գթութեան ուղիներու մէջ մըշտայած, Ընտանիքին, Ազգին, Երկրին, Մարդկութեան մէջէն անցնելով իրիւր ոգի մը լուսոյ, բարութեան, անձնութեան, խաղաղութեան, ներդաշնա-

կութեան, հետքեր դրոշմելով գեղատիպ, թեւեր շարժելով կենսասփիւռ, — խղճի գոհունակութիւնը դնելով ամէն գոհացումէ ու վարձքէ վեր, — գոհարութեանց դէմ արի, — տառապանաց մէջ երկնապիշ, — Նիւթէն վեր, կեանքէն դուրս նայելով, — հաւատալից, յուսալից, սիրալից, — Աստուծոյ աչքին տակ, զայն գիտնալով ու զայն փափաքելով միշտ վկայ ձեր գործոց ու խորհրդոց: — Ահա՛ իտէայն կեանքին զոր դուք պիտի փափաքիք ապրիլ, և զոր իրացնել ջանալու համար մտաւորական և բարոյական ոյժեր կազմուած կ'զգաք այժմ ձեր մէջ:

Ասոր համար և ես, ազնիւ Սանուհք իմ ուսումնաւարտք, վստահութեամբ և յուսով՝ ըսի թէ կ'առաջնորդեմ զձեզ ի մուտս ձեր նոր կենաց և թէ կը ներկայացնեմ զձեզ Ազգին ու Երկրին: Պիտի ջանաք դուք արդարացնել այս վստահութիւնը ձեր ազնուական կեանքով, և Աստուած պիտի պատկէ ամէն այն գեղեցիկ յոյսերը որք այս արշալուսային տօնին մէջ ոսկի ճաճանչներու նման կը թրթռան փողփողուն շուրջ ձեր մասաղ՝ այլ արդէն խոհուն ճակատներուն: Երթալք բարեաւ:

Ռ. Յ. Պ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾԻ

ՊԱՆՊԱՆ

(Ալֆոնս Տօէ)

Ալֆոնս Տօէ (ծնեալ Նիսի մէջ 1840ին), գաղիացի մեծանուն վիպաստն, հեղինակ այնքան փափուկ ու նուրբ գործոց, որոցմէ մին, *Յոռմոն կրսուր եւ Ռիպիեր երեք*, հեմարիս գլուխ-գործոց մը, պատկուած է Գալիական Ակադեմիայէն, իր վէպերէն միոյն մէջ (*Le petit Chose*) նկարագրած է Սարլանի գիւերօրիկ վարժարանին մէջ իբեւ հսկող-վարժապետ (*maître d'études*) անցուցած տարիներու յիշատակները: Հետեւեալ հաւուածք բաղուած է իր այդ գործէն:

Ազոնք (պղտիկները) չար չէին, հապա միւսները: Ազոնք ինծի բնաւ նեղութիւն մը չտուին, եւ ես ալ զիրենք չատ կը սիրէի, վասն զի դեռ գիշերօթիկ վար-

ժարանի հոտը չէր դար իրենց վրայէն, եւ իրենց աչքերուն մէջ կը կարդացուէր իրենց բոլոր հոգին:

Երբեք զիրենք չէի պատժեր: Ի՞նչ բանի համար պատժէի. մի՞թէ թռչունները կը պատժեն... Երբ իրենց ճճու ելու ձայները չափազանց բարձրանային, բաւական էր որ մէյ մը «լուռ թիւն» պոռայի, իսկոյն թռչնատունը կը լռէր — գոնէ հինգ վայրկենի համար:

Սերտարանին ամենէն մեծը տասն եւ մէկ տարեկան էր: Տասնմէկ տարեկան, խորհեցէ՛ք անգամ մը: Ի՞նչ կ'ընէք ուրեմն այն խոշոր Սէո իէռին որ կը պարծենար թէ գաւազանին ծայրովը կը կառավարէր զանոնք...:

Ես ամենեւին գաւազանով չվարուեցայ: Փորձեցի միշտ բարի ըլլալ, ահա՛ այս եղաւ իմ բոլոր հնարքս:

Երբեմն, երբ շատ խելօք կեցած ըլլային, իրենց զուարճալի պատմութիւն մը կը պատմէի... Պատմութիւն մը... Ի՞նչ երջանկութիւն: Իսկոյն, շուտով մը, տետրակները կը ծալուէին, գրքերը կը գոցուէին, ու կաղամար, քանակ, գրչակալ, ամէն բան խառն ի խառն դարաններու խորը կը նետուէին: Ետոյ, թեւերնին գրասեղանին վրայ խաչաձեւած, խոշոր խոշոր աչքերնին կը բանային ու մօտիկ կ'ընէին: Թափապէս իրենց համար հինգ կամ վեց հատ երեւակայական հրաշալի վէպեր յօրինած էի: Սկսնակ նպուռ մը, Օննիկ նագարին դժբախտութիւնները, Էն. Այն ատեն, ինչպէս այսօր, բարեմիտ Լաֆոնթէնը գրական Օրացուցին մէջ իմ նախասիրած սուրբս էր, եւ իմ վէպերս անոր առականներուն մեկնութիւնքն էին միայն: Ես կայ որ իմ անձնական պատմութենէս ալ քիչ մը բան կը խառնէի անոնց մէջ: Միշտ խելօք ծղրիթ մը կար որ ստիպուած էր, Բըդի Շօգին պէս, իր ապրուստը ճարելու, կարմրաթեւիկներ որ, ժագ Էյգէդին պէս, խառաքարտեայ կազմեր կը շինէին հեծկտալով: Այս պատմութիւնները շատ կ'զրօսեցնէին իմ փոքրիկներս, եւ զիս ալ նոյնպէս: Իժմախտաբար Պ. Վիօ այսօրինակ զրօսանք մը չէր ընդուներ:

Շարաթը երեք կամ չորս անգամ, բանալիակիր սոսկալի մարդը դարոցին մէջ քննական պտոյտ մը կ'ընէր տեսնելու համար թէ ամէն ինչ ըստ օրինի կ'ընթանա՞ր... Արդ, այդ օրերէնմին, մեր սերտարանը եկաւ ճիշդ Օննիկ ճագարին պատմութեան ամենէն սրտայոյզ մէկ վայրկենին: Պ. Վիօյի ներս մտնելը տեսնելով, բոլոր սերտարանը վեր ցատկեց: Պզտիկները, շուարած, իրարու երես նայեցան: Պատմիչին խօսքը բերանը մնաց: Օննիկ ճագարը, սարսափահար, մէկ թաթը օդին մէջ վեր առած մնաց, վախէն իր մեծ ականջը տնկելով:

Անպիտան առջեւ ստքի կեցած, Պ. Վիօ ժպիտ ի բերան, զարմացական երկար հայեցուած մը կը պտոյնէր գրասեղաններուն վրայ ու բնաւ գիրք ու տետրակ ու գրիչ, բան մը չէր երեւար: Չէր խօսեր, բայց բանալիները վայրագ ցնցումով մը կը շարժէին: Փռինկ, ֆռինկ, ֆռինկ, ծոյլ անպիտաններ, հոս տեղ ա'լ չեն աշխատիր ուրեմն:»

Դող ի դող, փորձեցի հանդարտեցնել ըրարկաշարժ բանալիները:

«Այս պարոններն այս օրերս շատ աշխատեցան, թոթովեցի... Ուղեցի զիրենք վարձատրել փոքրիկ պատմութիւն մը պատմելով:»

Պ. Վիօ չպատասխանեց ինձ: Ժմտագին խոնարհեցաւ, վերջին անգամ մ'ալ հնչեցուց բանալիները եւ դուրս ելաւ:

Երեկոյին, ժամ 4ի զրօսանքին, ինձ մօտ եկաւ եւ ինձ տուաւ, միշտ ժպտուն, եւ միշտ անխօսուկ, կանոնադրութեան տետրը՝ 12րդ էջին վրայ բացուած, ուր կը կարդացուէր պարսաւորութիւն վարձապէսին առ աշակերտս:

Հասկցայ թէ ա'լ պէտք չէր պատմութիւն պատմել, Է ա'լ երբեք չպատմեցի:

Քանի մ'օրեր, իմ փոքրերս անմխիթար էին: Օննիկ ճագարը չունէին, եւ սիրտս կտոր կտոր կ'ըլլար որ չէի կրնար զայն իրենց դարձնել: Այնքան կը սիրէի զիրենք, ահ եթէ գիտնայիք, այդ պզտիկ անառականները: Երբեք իրարմէ չէինք բաժնուեր... Դարոցը իրարմէ շատ որոշ երեք

մասերու բաժնուած էր. մեծերը, միջինները, փոքրերը. իւրաքանչիւրն ունէր իր պարտէզը, իր ննջարանը, իր սերտարանը, իմ պզտիկներս ուրեմն իմա էին, բոլորովին իմա. ինձ այնպէս կը թուէր թէ երեսունեւհինգ զաւակ ունէի...

Շաբաթն երկու անգամ, կիրակի եւ հինգշաբթի, պէտք էր տղայքը պտոյտի տանիլ: Այդ պտոյտը տանջանք մ'էր ինձ համար:

Սովորաբար Մարգ կոչուած տեղը կ'երթայինք, որ արդարեւ մեծ դալարավայր մ'էր՝ գորգի մը նման տարածուած լեռան ստորոտը, քաղաքէն կէս փարսախ հեռու: Քանի մը հատ յաղթ չագանակեանին, երեք կամ չորս դեղին ներկուած գինետուններ, գետնէն բղխող աղբիւր մ'որ խոտերուն մէջէն կը վազէր կ'երթար, սիրուն եւ զուարթ տեսիլ մը կ'ընծայէին տեղւոյն... Երեք սերտարանաց աշակերտներն ալ զատ զատ հոն կ'երթային, եւ անգամ մ'որ հոն հասնէին, զանոնք կը միացնէին մի միակ վարժապետի հսկողութեան տակ որ միշտ ես կ'ըլլայի: Երկու պաշտօնակիցներս գինետուն կ'երթային մեծերուն ըմպելիք հրամցնել տալու համար իրենց, եւ ըստ որում երբեք ես չէի հրաւիրուեր, կը մնայի աշակերտաց պահպանութիւն ընելու համար... Անանկ գեղեցիկ տեղւոյ մը մէջ իրաւցնէ շատ դժնդակ աշխատութիւն:

Ինչ աղւոր պիտի ըլլար կանաչ կակուղ խոտին վրայ, չագանակենեաց չուքին մէջ, տարածուիլ, եւ ծոթրենին հոտով գինովնալ աղբերակին խոխոջը մօտիկ ընելով... Ընդհակառակն, պէտք էր հսկել, պոռալ, պատժել... Բոլոր դպրոցը վրաս մնացած էր, սոսկալի բան էր:

Բայց ամենէն սոսկալին Մարգին մէջ աշակերտաց վրայ հսկողութիւն ընելը չէր, այլ իմ բաժնիս հետ, պզտիկներու բաժնին հետ քաղաքին մէջէն անցնիլն էր: Միւս հատուածները անխոնջ եւ առանց բնաւ կարգն աւելու, կը քայլէին, իրենց կօշկաց ներբաններն հնչեցնելով սալայատակաց վրայ: Իմ պզտիկներս, անոնք, բոլորովին տարբեր էին. կարգ

կանոն չէին հասկնար. խառն ի խառն կ'երթային, իրարու ձեռքէ բռնած, եւ ճամբուն երկայնքն ի բուն շարունակ չաղակրտեղով: Ի դուր կը սրուայի. «կարգերնիդ մի՛ աւրէք»: զիս չէին հասկնար եւ ա'լ աւելի ծուռ մօռու կը քայլէին:

Խուսիս գլուխը բաւական կը գոհացնէր զիս: Ամենէն մեծերը հոն կը դնէի, ամենէն շնորհքովները, անոնք որ թիկնոց կը կրէին, բայց պոչը, ահ, ինչ խառնաբնդորութիւն: Խօլ գէղ մը մանուկներու, մացառամու մագեր, աղտոտ ձեռքեր, պատռտած տաբատներ... վրանին նայելու չէի համարձակեր:

Ի տրգեղ աւառեացի սեւաթորմի ձուկըն զագիր (desinit in piscem etc)\*, կ'ըսէր ինձ այս առթիւ ժպտունն Պ. Վիօ, որ իր որամտութեան վայրկեաններն ունէր: Իրողութիւնն այս էր որ իմ հատուածիս յետամասնը ողորմելի երեւոյթ մ'ունէր:

Կը հասկնաք անշուշտ իմ յուսահատութիւնս՝ երբ ստիպուած էի Սարլանտի փողոցներուն մէջ երեւալ այդպիսի ուղեկիցներով ու կիրակի օր մանաւանդ: Եկեղեցեաց զանգակները միաձայն կը հնչէին, փողոցներուն մէջ լեցուն էր բազմութիւնը: Գիշերօթիկ աշակերտուհեաց խումբերու կը պատահէինք որք երեկոյեան ժամերգութեան կ'երթային, վարդագոյն գդակներով դերձակուհիներու, բաց մոխրագոյն տաբատներով սպրկիկ երիտասարդներու: Ու պէտք էր ագոնց ամենուն մէջէն ձեռքել անցնիլ մաշած թիկնոցով մը եւ դպրոցականաց ծիծաղելի խումբով մը: Ինչ ամօթ:

Բոլոր այն անշնորհք սատանիկներուն մէջ զորս շարաթն երկու անգամ քաղաքին մէջ կը պտոցնէի, կար մանաւանդ

(\*) Ակնարկութիւն Ռուսեայ Արուեստ ֆերդուակնի տառչին տղերուն մէջ նկարագրուած մտացածին անձոնի կենդանւոյ պատկերին, որ կ'սկսի կնոջ զլխով, կը շարունակուի ծիւ պարանոցով, զանազան կենդանեաց անդամներով ու պէս պէս փետուրներով ու կ'աւարտի ծկան պնջով, եւ որուն կը նմանեցնէ Ռուսիոյ խառնակ անկեղբարան գրուած մը որոյ մասանց ու ամբողջութեան մէջ կը պակսի ներգաշնակութիւնը: (Մ. Թ.)

մէկը, կէս-ներքին աչակերտ մը, որ իր տղեղութեամբ ու աղտոտութեամբ յուսահատութիւն կը սլատճառէր ինձ:

Երեւակայացէք գարշելի սղտիկ վիժած մը, այնքան փոքր ու մանրուք որ ծաղրելի բան էր: ասոր հետ մէկտեղ անգեղեայ, զազիր, չսանտրուած մազերով, գէշ հագուած, վրան գլուխը ցեխոտ գայռոտ, եւ որպէս զի ամէն բան կատարեալ ըլլայ, սոսկալի կերպով ծուռ ոտքերով, թիւրասրուն:

Երբեք այդպիսի աչակերտ մը, եթէ ներելի ըլլայ աչակերտ անունը տալ ադոր, չէ երեւցած վարժարանական արձանագրութեանց թերթերուն վրայ: Ճշմարիտ անպատուութիւն մ'էր մի գիշերօթիկ վարժարանի:

Իմ մասիս, զինքը սաստիկ կ'ատէի, և, երբ կը տեսնէի խումբին ետեւէն սղտիկ բազի մը շնորհալի՝ տատանումովը ճօճ ի ճօճ դալը, հատուածիս պատուոյն համար՝ կօշկի խոշոր հարուածներով զինքը վանելու կատաղի փափաք մը կուգար ինձ:

Պանպան, այսպէս մականունանած էինք զինքը իր երերաքին անկտնոն քալուածքին համար, Պանպան շատ հեռու էր ազնուապետական ընտանիքի մը վերաբերելէ: Յայտնի կը տեսնուէր այս իր ձեւերէն, իր խօսելու կերպերէն եւ այն գեղեցիկ յարաբերութիւններէն զոր ունէր տեղացւոց մէջ:

Սարլանտի բոլոր փողոցի տղաքները իր բարեկամներն էին:

Իրեն շնորհիւ, երբ դուրս ելնէինք, միշտ մեր ետեւէն կուգար սղտիկ սրկայներու խումբ մը, որք ծաղրական հպարտ ձեւեր կ'առնուին, Պանպանը իր անուամբ կը կոչէին, մատնացոյց կ'ընէին զայն, չազանակի կեղեւներ կը նետէին անոր եւ ուրիշ հագարումէկ կապկութիւններ կ'ընէին: Իմ սղտիկներս շատ կը զուարճանային այս բաներէն, բայց ես չէի խնդար, եւ ամէն շարաթ տնօրէնին մանրամասն տեղեկագիր մը կ'ուղղէի Պանպան աչակերտին եւ անոր ներկայութենէն յառաջ եկած բազմաթիւ անկարգութեանց մասին:

Դժբախտաբար իմ տեղեկագրերս անպատասխանի կը մնային, եւ ես ստիպուած էի միշտ փողոցներուն մէջ երեւիլ ընկերակցութեամբ Պ. Պանպանի, միշտ աւելի աղտոտ և աւելի թիւրասրուն քան երբեք:

Կիրակի մը, ի մէջ այլոց, տօնի եւ մեծ արեւի կիրակի մը, պտոյտի համար ելաւ եկաւ այնպիսի վրայ-գլուխով մը որ ամէնքս ալ սոսկացինք: Երբեք նմանօրինակ բան մը չէք երազած: Սեփ սեւ ձեռքեր, առանց լարի կօշիկներ, գրեթէ տարատ ալ բնաւ չկար... ճիւղ մը:

Ամենէն ծիծաղաշարժն այն էր որ կ'երեւար թէ նոյն օրը զինքն ինձ զրկելէ յառաջ շատ աղուորացուցեր էին զինքը: Իր գլուխը, սովորականէն աւելի լաւ սանտրուած, անուշահոտ իւզով օծուած էր, որով իր մազերը ողորկ ու փակած էին: Բոլորակային հանգոյցը չգիտեմ ինչ բան ունէր ուրիշ մայրական մատներու հոտը կուգար: Բայց դպրոց հասնելէ յառաջ քաղաքին մէջ այնքան առուներ, այնքան խոհերներ կան:

Պանպան անոնց ամենուն մէջ ալ ինկած ելած էր:

Երբ տեսայ որ կուգար միւսներուն մէջ իր կարգն առնուլ, հանգարտ ու ժպտուն իրեւ թէ բնաւ բան մը պատահած չըլլար, սգգանաց եւ զայրութի յուզում մ'ունեցայ:

Երեսն ի վեր պոռապի «կորսուէ՛ր»:

Պանպան համարեց թէ կատակ կ'ընէի ու շարունակեց ժպտիլ: Այդ օրն ինքզինք շատ գեղեցիկ կը կարծէր:

Կրկին անգամ գոչեցի իրեն «կորսուէ՛ր»:

Տխուր եւ հլու աչքով մ'ինձ նայեցաւ, իր աչքը կը պալատէր, բայց ես անողոք գտնուեցայ եւ խումբը ճամբայ ելաւ, զինքը թողլով միայնակ, անշարժ, փողոցին մէջտեղ:

Ինքզինքս ամբողջ օրուան համար իրմէ ազատուած կը կարծէի, երբ, քաղաքէն դուրս ելնելու պահուն, խնդուքներ ու փափաքներ՝ որ վերջապահներու կողմէն կուգային՝ գլուխս ետիս դարձնել տուին ինձ:

Մեզմէ չորս կամ հինգ քայլ հեռուէն,

Պանպան լըջօրէն կը հետեւէր խումբին :  
«Քայլերնիդ արագեցէ՛ք», ըսի առաջին երկուքին :

Աշակերտը հասկցան որ ծուռարունին խաղ մ'ընել կ'ուզուի, եւ ամբողջ հառուածը դժոխային գնացքով մ'սկսաւ քայլ առնուլ սրբնթաց :

Մերթ ընդ մերթ ետին կը դառնային նայելու համար թէ Պանպան կրնա՞ր հետեւիլ, եւ կը խնդային նշմարելով զայն հեռուն, շատ հեռուն, բուռի մը չափ միայն խոշոր, քայլ փոխելով՝ փոքր այլ արագ՝ ճամբուն փոշւոյն մէջ, կարկանդակ ու լեմոնաջուր ծախողներուն մէջտեղ :

Այդ կատաղին Մարգը հասաւ գրեթէ մեզ հետ ի միասին : Միայն թէ յոգնութենէն դեպի դեղին կտրած էր և խղճալի կերպով կը շարժէր ոտքերը :

Սիրտս յուզուեցաւ, և, անզթ ու թեանս վրայ քիչ մ'ամօթ ահար, զինքը մեղմութեամբ քովս կանչեցի :

Կարմիր քառակուսեակներով գունաթափ փոքրիկ պղուզս մը հագած էր, Լիօնի գիշերօթիկ վարժարանին մէջ Բըդի Շօզին հագած պղուզան :

Իսկոյն ճանչցայ այդ հաղուստը, եւ ներսի դիէս կ'ըսէի, «Թշուառական, չէն ամէնար. բայց ինքզինքդ, Բըդի Շօզն է որ այդպէս կը չարչրկես անտարբերութեամբ» : Եւ, ներքին արցունքներով առլցուած, սկսայ բոլոր սրտովս սիրել այդ անժառանգեալը :

Պանպան գետինը նստած էր իր ոտքերուն պատճառաւ որք կը ցաւէին : Քովը նստայ. իրեն հետ սկսայ խօսիլ... իրեն նարինջ մ'առի... ոտքերը պիտի լուայի եթէ հնար ըլլար...

Այդ օրէն ի վեր Պանպան իմ բարեկամս եղաւ. իր մասին շատ սրտաշարժ բաներ իմացայ :

Պայտարի մը որդին էր, որ, ամէն տեղ դաստիարակութեան օգուտներուն գովեստը լսելով, խեղճ մարդը հոգին բերանը առած կ'աշխատէր կարողանալու համար իր զաւակը իբրեւ կէս-ներքին աշակերտ մեր դպրոցը զրկել : Բայց մեզք որ Պանպան դպրոցի համար եղած չէր ու

շատ չէր օգտուեր անկէ :

Դպրոց մտած օրը իրեն գաւազաններ քաշելու համար օրինակ մը արուած եւ ըսուած էր : «Գաւազաններ շինէ այսպէս» : Եւ տարիէ մ'ի վեր Պանպան միշտ գաւազաններ կը գծէր : Եւ ի՞նչ գաւազաններ, Աստուած իմ... ծռմուկած, ազտուտ, կաղ, մերթ այս կողմ պառկած մերթ այն կողմ, Պանպանի գաւազաններ :

Ոչ ոք կ'զրադէր անով : Մասնաւորապէս եւ ոչ մէկ դաստարանի կը վերաբերէր. ընդհանրապէս բաց գտած դաստարանը կը մտնէր : Օր մը, տեսան որ փիլիսոփայութեան կարգին դաստարանը նստած իր գաւազանները շինելու վրայ էր... Տարօրինակ աշակերտ մ'այդ Պանպանը :

Երբեմն սերտողութեան ատեն կը դիտէի զինքը, — իր թուղթին վրայ ծալուած ծռած, քրտնաթոր, քթէն բերնէն չունչ փչելով, լեզուն դուրս ձգած, ամբողջ ձեռքովը գրիչը բռնած ու բոլոր ուժովը կոխելով, իբր թէ գրատեղանը ծակել անցնիլ ուզէր... Ամէն մէկ գաւազանին, մեղան կ'առնուր, եւ ամէն մէկ տողին վերջը՝ լեզուն ներս կը քաշէր ու կը հանգչէր ձեռքերն իրարու շփելով :

Պանպան աւելի յօժարութեամբ կ'աշխատէր, հիմայ որ բարեկամ էինք...

Երբ էջ մ'աւարտէր, կը փութար չորս ոտքով վեր կ'ելնէր ամպիտոնէս եւ իր հրաշակերտը առջեւս կը դնէր առանց բան մ'ըսելու :

Ձեռքովս փոքրիկ գորովական հարուած մը կուտայի իրեն ըսելով «Շատ լաւ է» : Անճոռնի բան էր, բայց չէի ուզեր զինք յուսահատեցնել :

Իրօք ալ, կամայ կամայ գաւազանիկները կ'սկսէին աւելի ուզիլ քալել. գրիչն ալ այնչափ չէր ցայտեր ու նուաղ մեղան կար տետրակներուն վրայ... Կարծեմ թէ պիտի յաջողէի վերջապէս բան մը սովորեցնելու իրեն. դժբախտաբար ճակատագիրն զմեզ բաժնեց : Միջիններուն հսկող վարժապետը դպրոցէն կը մեկնէր :

Ըստ որում տարին մօտ էր վերջանալու, տնօրէնը չուզեց ուրիշ վարժապետ մ'առնուլ : Փոքրերուն ամպիտոնին վրայ ճար-

տասանութեան կարգին մօրուսաւոր աշակերտներէն մին դրին, եւ միջիններուն սերտարանն ալ ինձ յանձնեցին:

Այս բանն իբրեւ մեծ աղէտ մը նկատեցի: Նախ որ միջինները զիս կը սոսկացնէին. Մարգին օրերը զիրենք գործի մէջ տեսած էի, եւ գաղափարը թէ անգագար անոնց հետ պիտի ապրէի՝ սիրտս կը ճնշէր:

Յետոյ պէտք էր թողուլ իմ պղտիկներս, իմ սիրելի պղտիկներս զորս այնքան կը սիրէի... Ինչպէս պիտի վարուէր իրենց հետ մօրուսաւոր ճարտասանականը... Պանպան ինչպիսի ըլլար, իրօք դժբախտ էի:

Ու պղտիկներս ալ շատ տխուր էին մեկնիլ տեսնելով. Այն օրը ուր իրենց իմ վերջին սերտողութիւնս ըրի, սրաաշուղթեան վայրկեան մ'եղաւ երբ զանգակը զարկաւ... Ամէնքն ուզեցին զիս համբուրել... Ոմանք մինչեւ իսկ, կ'ապահովեմ զձեզ, սիրուն բաներ գտան ինձ ըսելու:

Իսկ Պանպանը...

Պանպան չխօսեցաւ: Միայն, դուրս ելնելու վայրկեանիս, կտակարմիր կտրած, ինձ մօտեցաւ եւ, հանգիստաւ կերպով մը, ձեռքիս մէջ դրաւ գաւազաններու շքեղ տետրակ մը զոր յատուկ ինձի համար գծած էր:

Խեղճ Պանպան...

**Ծանօթ. բարգմանչիւն.** — Ալֆոնս Տոսէի այս հասուածին մէջ, որ իր քնական գեղեցկութեան ու սիրուն պարզութեան մէջ կը ներկայացնէ դպրոցական կեանքի պակեւներէն մին, խորհրդածութեան մի քանի նիւթեր կը գտնենք: Նախ կը տեսնենք վարժապետին բարութիւնը, սէրն իր աշակերտաց վրայ, որ փոխադարձաբար այս վերջնոց մէջ կը ծնուցանէ սէր առ դաստիարակն, եւ կը դիւրացնէ ու կը քաղցրացնէ հնազանդութիւնը, հեշտ գործելով միանգամայն դաստիարակին պաշտօնը, աշակերտներն իբրեւ իր զաւակներն ընելով անոր ու հետեւապէս անոնց ընկերութեան մէջ գտնել ծաղով անոր երջանկութեան առիթներ: — Երկրորդ, սա ճշմարտութիւնը կը տեսնենք անգամ մ'ալ հաստատուած թէ ամենէն աւելի անժառանգեալ, շնորհազուրկ կարծուած հոգն վրայ ալ վարժապետը եթէ զգայուն սիրտ ու դիտող աչք ունի, պիտի գտնէ յատկութիւններ՝ որք իր համակրութիւնը պիտի շարժեն առ այն եւ յոյս պիտի ներշնչեն իրեն: — Եւ վերջապէս, Պանպանի պատ-

մութիւնը ցոյց կուտայ որ ամենէն նուազ օժտուած հոգն, եթէ զգայ ինքզինքը սիրուած ու քաջալերուած, պիտի կերպարանափոխի, նոր ուժերու արթննալը պիտի իմանայ իր մէջ որ ցունց պիտի տան իր իմացականութեան ու կամքին, եւ անյուսալի արդիւնքներ երեւան պիտի գան, սիրոյ հրաշագործ զօրութիւնը հաստատող:

## ՏՐԱՎԻԶՈՆԻ ՎԱՐժԱՐԱՆԱՅ ԽՆԴԻՐԸ

Տրավիզոնի գաւառին Ուսմ. Խորհուրդը քաղաքին վարժարանաց Ուսուցչական Ժողովոյն հրահանգ կուտայ վերջին քըննութեանց արդիւնքը ծանուցանել աշակերտաց ծնողաց, վիճակացոյցներ յղելով անոնց տունները, ինչպէս որ որոշուած էր նախորդ Ուսմ. Խորհուրդէն: Ուսուցչական Ժողովը իր Ատենապետին բերնով կը պատասխանէ թէ իրեն վերաբերեալ գործողութիւն մ'է այդ և թէ կը կատարէ զայն՝ եթէ ինք պատշաճ դատի: Ուսմ. Խորհուրդը կը կրկնէ իր հրահանգը, Ուսուցչաց Ժողովը կը պատասխանէ մերժմամբ, որուն համար կ'ըսէ թէ ունի իր յատուկ պատճառները, — մանկավարժական նկատումները: Ուսմ. Խորհուրդը կը պնդէ, հրահանգը հրամանի կը փոխէ, Ուսուցչաց Ժողովը վերստին կը յամառի, և խառն ժողովի մէջ իր Ատենապետը կը թշնամանէ Ուսմ. Խորհրդոյ անդամներէն մին: Այն ատեն Գաւառական Կրթական Վարչութիւնը խմբովին կը հրաժարեցնէ վարժարանին Ուսուցչական մարմինը որ կը բաղկանայ 13 ուսուցիչներէ և ուսուցչուհիներէ:

Ահաւասիկ Տրավիզոնի վարժարանաց օրուան խնդիրը, եթէ մեր յիշողութիւնը չի սխալիր:

Օրագրութիւնն այս խնդրով կ'զբաղի, և հրաւէր կը կարգայ Մասիսի յայտնել անոր վրայ իր տեսութիւնը:

Նախ և յառաջ, զարմանալի կը թուի մեզ Ուսուցչական Ժողով մը որ Ատենապետ մ'ունի և որուն հետ, իբրեւ հեղինակութեան մը, յարաբերութեան կը մտնէ Ուսմ. Խորհուրդը: Մեր Կրթական Կանոնադրոյն մէջ այսպիսի ժողովի մը գոյու-

Թեան իրաւունք տուող ո՛ր և է յօդուած կամ տրամադրութիւն չի գտնուիր։ Արդարեւ կազմ. կանոնագրոյն ի՞նչ յօդուածոյն երկրորդ պարբերութիւնը կը տրամադրէ որմէկէ աւելի ուսուցիչներ ունեցող Տարրական Նախակրթարանին Տեսուչ-Դաստիարակը ուսուցչաց կարծիքն առնուող պրոցական բարեկարգութեան վերաբերեալ խնդրոց մասին և ղանոնք գէթ ամիսը միանգամ ի ժողով գումարէ ուսմանը ընթացքին և կրթական եղանակաց վրայ կարծեաց փոխանակութիւններ ընելու համար, բայց յայտնի է թէ այդ լոկ պատահական խորհրդակցական գումարում մ'է և ո՛չ թէ վարչական իշխանութիւն մ'ունեցող կանոնաւոր ժողովի մը հաւաքումը։ Արդ մէջ Տեսչի խօսք կոյ և ո՛չ բնաւ Ատենապետի, որով նաեւ կը հասկցուի թէ խնդիրը կազմակերպեալ և իրաւասութեան տէր ժողովի մը վրայ չէ բնաւ։ Այդ մարմին մինչեւ իսկ չէ կարող Տեսչին վրայ հարկադրել իր կարծիքներ, վասն զի ըստ կանոնագրոյն, Տեսչին «ստորագրասեալ են միւս պաշտօնեայք և պարտական են հետեւիլ իւր հրահանգաց»։

Արդ, հոս Տեսչի խօսք բնաւ չկայ, այլ ընդհակառակն ուսուցչական ժողովոյ Ատենապետի մ'որ յանուն այդ ժողովոյն կը բանակցի Ուսմ. Խորհրդոյ հետ։ Մի այդպիսի մարմին բնաւ կանոնական գոյութիւն չունի և չի կրնար ունենալ. կը զարմանանք թէ ի՞նչպէս Տրամադրութիւն մը կը ճանչէ այդպիսի մարմին մը եւ պաշտօնապէս յարաբերութեան կը մտնէ անոր իշխանին հետ։ Արդեօք ուսուցչական ժողովոյ Ատենապետ ըսելով վարժարանաց Տեսուչը կը հասկնայ. բայց յայնժամ, այսպիսի խնդրոց մէջ, նա ինքն միայն պատասխանատու է իրեն գերադաս մարմնոյն, վէճը պարտէր իրեն և անոր մէջ սահմանափակուիլ, և անհամաձայնութիւնը իրեն միայն պաշտօնանկութիւնը յառաջ բերել։

Բայց կ'երեւի թէ վարժարանք այժմ յատուկ Տեսուչ մը չունին, և ընկերհաշ-

տիկ դրութեամբ մը, իրենցմէ ընտրուած նախագահի մ'առաջնորդութեամբ, ուսուցիչք հաւաքարար կը վարեն ղանոնք։ Նորօրինակ դրութիւն մ'է այս, որուն մէջ զոհուած է դասակարգական սկզբունքը որ ամէն հաստատութեան մէջ կանոնաւորութեան պայմանն է։ Եւ ո՛ւր որ օրինականն ու ապօրէնն իրար կը խառնուին՝ հոն անխուսափելի են անշուշտ ցաւալի ընդհարմունք և փաստեր պայքարք։

Միւս կողմանէ կը զարմանանք որ Ուսմ. Խորհուրդ մը ուղղակի կը վարէ վարժարաններ, Թաղերու, նոյն իսկ կեդրոնի թաղերու, վարժարանք ըստ օրինի կը գտնուին իրենց Թաղ. Խորհրդոց և անոնց օժանդակ Հոգաբարձութեանց անմիջական խնամակալութեան տակ, իսկ Ուսմ. Խորհուրդք ընդհանուր տեսչութիւնն ունին շրջանակին համայն վարժարանաց։ Դաւառական Ուսմ. Խորհուրդ մը չի կրնար, առանց Թաղ. Խորհրդոյն իրաւասութեան փնտելու, և հետեւաբար առանց ապօրինաւորութեան, իր ուղղակի տնօրինութեան ենթարկել գաւառին Թաղերէն միոյն վարժարանը, ինչպէս Պոլսոյ մէջ կեդր. Ուսմ. Խորհուրդը չէ կարող ու չպարտի իր անմիջական հսկողութեան տակ առնուլ Պոլսոյ այս կամ այն Թաղի վարժարանին վարչութիւնը։ Այս օրինական կէտին ալ զանցառումէն սա անտեղութիւնն ահա՛ յառաջ կուգայ որ Ուսմ. Խորհուրդն որ կրնար դատաւոր մ'ըլլալ ընդ մէջ Թաղ. Խորհրդոյն ու դասառուաց՝ այժմ ընդհանուր միանգամայն դատախազ ու դատաւոր ըլլալու յոռի կացութեան մէջ կը գտնուի, և, իրիւ ուղղակի իրեն դէմ անսաստող, չի կրնար գէթ շրջանակին այլ վարժարանաց մէջ ի պաշտօն կոչել պաշտօնանկ ուսուցիչները։ Որչափ գաւառը փոքր ըլլայ, միշտ պէտք է որ իրարմէ որոշ ըլլան անոր մէջ ընդհանուր վարչական մարմինները և թաղական մասնաւոր վարչութիւնները։

Այսու հանդերձ այս մասին դիտողութիւն ընել կը պատկանէր կեդր. Ազգ.

վարչութեան, և ըստ որում այս վերջինը՝ կ'երեւի՝ ընդունած է Տրապիզոնի գաւառական վարչութիւնը իբրեւ միանգամայն նոյն քաղաքին տեղական վարչութիւն, վարժարանաց Ուսուցիչներուն պարտքն էր հնազանդիլ Ուսմ. Խորհրդոյն, թէ՛ իբրեւ գաւառին կրթական Տեսչութեան և թէ՛ իբրեւ իրենց թաղին յատուկ զըպրոցական Հոգարարձութեան: Մեր կըրթական Կանոնագիրը Թաղ. Խորհրդոյ և Հոգարարձութեանց պարտաւորութեանց մէջ կը դնէ, ի մէջ այլոց, «վարձարեւ ու յանդիմանել (աշակերտներն) ըստ պատշաճի», և երբ Տրապիզոնի Ուսմ. Խորհուրդը, իբրեւ քաղաքին վարժարանաց յատուկ խնամակալ մարմինը, հրահանգ կուտայ աշակերտաց ծնողաց ծանուցանել իրենց զաւակաց ուսումնական վիճակը՝ աստիճանեալ նօթերով, իր պարտաւորութենէն դուրս բան մ'ի գործ չի դնել, համարելով որ այդ նօթերն կրնան վարձք կամ յանդիմանութիւն համարուիլ աշակերտաց համար: Ձենք հասկնար Ուսուցչաց յամառութիւնը այդ նօթերը չծանուցանելու մասին: Արդեօք վնասակար դրութիւն մը կը համարին վարձարեւն ու յանդիմանելը կամ պատժելը. բայց կրթական Կանոնագիրն ընդունած է զայն. և յետոյ, նոյն իսկ մանկավարժական տեսակէտով, կ'արդարանայ վարձուց և քաջալերութեանց, ինչպէս և պատժոց ու յանդիմանութեանց սկզբունքը իբրեւ աշակերտաց պատուասիրութեան զգացումէն օգուտ քաղելու արդիւնաւոր միջոց: Քննութիւնք տեղի ունեցեր են. աշակերտք ընականաբար հետաքրքիր են և իրաւունք ունին գիտնալու վարժապետաց կարծիքն իրենց ցոյց տուած զօրութեան մասին. արդէն քննութեան տոնն հաւանութեան կամ դժգոհութեան ցոյցեր քիչ շատ յայտնած են ամենուն այն տըպաւորութիւնը զոր իրենց պատասխաններն յառաջ կը բերէին: Եւ ծնողաց իրաւունքը չէ՞ գիտնալ թէ ինչպէս կը գնահատուին իրենց զաւակներն, իրենց վարուց և յառաջդիմութեան մասին, ի-

րենց դաստիարակներէն: Բայց ենթադրենք թէ մեր ուսուցիչք խմբովին տարբեր համոզումներ ունին այս խնդրոց վրայ. միշտ սակայն պարտաւոր էին գործադրել վարժարանաց խնամակալ Մարմնոյն հրահանգը որ կը պատուիրէր ի գործ դնել բան մ'որ իբր իր պարտքը կը նկատուի օրէնքէն:

Եզրակացութիւն: — Առաջնորդանիստ քաղաքին յատուկ Թաղ. Խորհուրդ մը պարտի իւր անմիջական խնամոց տակ առնուլ քաղաքին վարժարանները, որոնց Տեսչին ու գլխաւոր ուսուցչաց ընտրութեանն համար, ըստ արամադրութեան կազմական Կանոնագրոյ, ընտրելիներ կը խնդրէ տեղւոյն Ուսմ. Խորհուրդէն: Սա իր ցանկը կը կազմէ թէ՛ գրտէն առնլով նոր անձեր՝ եթէ ուզէ, և թէ՛ նոյն իսկ վարժարանաց հրաժարեալ ուսուցիչներէն, որոնք հաւաքաբար՝ իբրեւ ուսուցչական ժողով՝ պաշտօնանկ ըլլալէ յետոյ, կրնան անհատապէս իր հաւանութեանն ու ընտրութեանն արժանանալ իբրեւ ուսուցիչ: Թաղ. Խորհուրդն կարող է իրեն օգնական առնուլ յառաջդիմասէր ուսեալ անձերէ կազմեալ Հոգարարձութիւն մը, որուն հետ կը կատարէ, ընտրելի Տեսչին ներկայացուցած ցանկին վրայէն, օգնական-դաստիարակաց ու օգնական-վարժուհեաց, ինչպէս նաեւ օգնական-մասնագէտ ուսուցչաց ընտրութիւնները: Ու ամէնքն ալ կ'ուխտեն ա'լ չվերադառնալ առջի սխալներուն:

## ԵՐԿՐԱՇԱՐԺՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Երկրաշարժը, որ յունիս 28 ին այնպէս ուժգին ցնցեց մեր մայրաքաղաքը և 12 երկվայրկեաններու ա'յնքան սուղ միջոցի մը մէջ այնքան ծանր կորուստներ պատճառեց, իր վնասաբեր ազդեցութիւնն ունեցաւ, ի մէջ այլոց, նաեւ մեր տղայոց կրթութեան գործին համար: Մեծ Շուկային մէջ պարապող շատ հայեր այսօր անգործութեան դատա-

պարտուած են գրեթէ. շատերու միանգամայն տունն ու խանութը փլած կամ փնասուած են, և գործերու առնչութեանց պատճառաւ՝ ուղղակի չփնասուողները իրենց բաժինն ունեցած են աւելի կամ նուազ այլոց կրած հարուածէն: Մեր վարժարանաց հասոյթի կարեւոր աղբիւրներէն մին եղած են ցարդ ծնողաց վճարած դպրոցական թոշակները, և յաւելցած ընդհանուր աղքատութիւնը բնականաբար կը նուազեցնէ ապագային համար այս կողմէ սպասուած հասութի գումարները: Ինչ ինչ թաղեր մանաւանդ ուղղակի ու շատ աւելի զգալի կերպով փնասուած են. իրենց եկեղեցւոյն ու դպրոցաց կալուածները կործանած կամ առ այժմ անգործածելի վիճակի մէջ լինկած են. իրենց թաղեցւոց մեծ մասին բնակութիւնք փլած կամ խախտուած են, շատեր ուրիշ թաղեր խոյս տուած, և այլք, վրաններու տակ ապաստանած, նոյն իսկ ապրելու համար հանրային գթութեան կարօտ մնացած են: Ամենէն աւելի հարուածեալներն են այս նկատմամբ Գումգաբու, Կէտիկ Բաշա և Սամաթիա, բայց ոչ նուազ Մաքրիքէօյ և Պալաթ վիստով դուրս ելած են երկրաշարժի տապալակէն:

Իրաց այս վիճակին առջեւ, թաղական Խորհուրդք և Հոգաբարձութիւնք մեծ մտահոգութեան մէջ լինկած են իրենց թաղին դպրոցական գործին համար: Արդէն դժուարաւ կարող էին հաւասարակուել իրենց ելմտացոյցը, և ահա այժմ մտից կողմը յանկարծ կարեւոր պարագ մը կը գոյանայ. Ի՞նչ պէտք է ընել Խնայողութեան վրայ կ'սկսին խորհիլ բնականաբար: Ուսուցչաց պարագուրդի ամուսականները կը յապուեն կամ կը զեղչեն, և յառաջիկայ դպրոցական տարւոյն համար կ'առաջադրեն դպրոցաց ուսումնական մակարդակը իջեցնել, ուսմանց ծրագիրը կարճել համառօտել: Օրական մասուլը կը յուզի իրաւամբ, և կոչում կ'ընէ մէկ կողմէն թաղ. Խորհրդոց և Հոգաբարձութեանց արիութեան և միւս կողմէ ամենուն կրթասիրական ձեռքնուկութեան:

Կայսր թիւնն յիրաւի ծանր է, մանաւանդ վերոյիշեալ թաղերուն համար: Գումգաբուի և Սամաթիոյ վարժարանք բաւական կանոնաւոր վիճակի մը մէջ կ'երթային. Մաքրիքիւզ հիմնական բարեկարգութեամբ մը դեռ նոր, տարիէ մ'ի վեր, իր վարժարանը արդիւնաւոր դիրքի մը մէջ դրած էր. և հիմայ այս վերջինն ունի իր եկեղեցին ու դպրոցը նորադելու հոգը, և միւսները գրեթէ վերաշինելու իրենց բոլոր կալուածները: Այսու հանդերձ, մեք եւս ճայնակցելով մասնաւորապէս Հայրենիքի, կը կարծեմք որ փնասեալ թաղից վարչական մարմնոց պարագն է, այս պարագայի մէջ, չվհատիլ, և ջանալ աղէտին հետեւանքները դարմանել այնպէս որ փնասը ո'չ ուսուցչութեան և ո'չ ուսանողութեան վրայ ծանրանայ:

Դպրոցական ահուղջ տարին աշխատող ուսուցչէն կտրել իր արձակուրդի ամսականները, վասն զի թաղին սնտուկը աղքատացաւ յանկարծ, կը նշանակէ ընդհանուրին կրելիք փնասը ծանրացնել ոմանց վրայ, և այս անշուշտ անիրաւութիւն է: Եթէ ուսուցիչք պարտաւոր ըլլան, հանրային փնասու մ'առջեւ, մի քանի հարիւր դահեկանաց նպաստ մ'ընել եկեղեցւոյն կամ դպրոցին, այն ատեն հարկ էր որ համեմատաբար այլ ազգայինք ալ իրենց վաստակէն կամ ունեցածէն նոյն նպաստն ընէին. բայց գժրախոտուար, նմանօրինակ պարագայից մէջ, իրք այսպէս տեղի չեն ունենար, և վարիչք առձեռնապատրաստ միջոց մը կը համարին յաճախ ուսուցչաց վճարելի գումարները վճարեալ համարելով լուծել ելմտական կիճիւ մը: Իրաւ գիւրին ու գիւթական իսկ միջոց մը, բայց գերազանցապէս անիրաւ:

Եւ յետոյ, մինչև ո՞ր տատիւն կտրելի է խոնարհեցնել դպրոցի մ' ուսումնական մակարդակը: Այս այնպիսի բան մ'է որ կարենայ ու սրբտաւոր ըլլայ հպատակիլ միշտ տնտեսական վիճակի մը փոփոխումներուն: Անշուշտ թաղ մը, երբ իր կարողութիւնը կը ներէ, կրնայ

բարձրացնել իր դպրոցին վիճակը, բայց իր անկարողութեան կամ նիւթական դժուարութեանց ատեն ազատ է ըստ կամի զեղչել ու վերածել դպրոցին ծրագիրը:

Ո՛չ, անտարակոյս. ասիկայ սահման մ'ունի ու պարտի ունենալ:

«Ամէն թաղ պարտաւոր է գտնէ տարրական նախակրթարան մ'ունենալ»: Այսպէս կը տրամադրէ մեր կրթական կանոնադրը, և կանոնին տրամադրութիւնը բացատրութիւնն է միայն բնական ու անհրաժեշտ պարտաւորութեան մը:

Տարրական նախակրթութիւնն այն է որ կ'աւանդէ ընկերութեան մ'անհատներուն, իբրեւ մարդ եւ իբրեւ քաղաքացի, անհրաժեշտ եղող ծանօթութիւնքն, ու կը մարզէ մանկան ֆիզիքական, մտաւորական ու բարոյական կարողութիւնները՝ կարող ընելու համար զայն յետոյ իր միջավայրին մէջ ապրելու մտացի, պարկեշտ և օգտակար գործունէութեամբ: Արդ ամէն ծնողի նուիրական պարտականութիւնն է այս կրթութիւնը ապահովել իր զաւակին, որ առանց անոր զուրկ պիտի ըլլար իբրեւ մարդ ապրելու էական միջոցներէ: Եւ թաղը որ ամբողջութիւն մ'է ծնողաց, հաւաքաբար այս պարտականութիւնն ունի իր ուսանող մատաղ սերնդեան հանդէպ: Ահա՛ սահմանը ուր կրնայ միայն վերածուիլ թաղի մը դպրոցական ծրագրի՝ անձկացումը, ենթադրելով որ յառաջագոյն անկէ անդին տարածուէր աւանդուած կրթութիւնը: Տարրական նախակրթութեան ծրագիրը հարկ չէ աստ մանրամասնել. յայտնի է այդ, և գիտեն չատեր որ իր ամփոփման ու համեստութեան մէջ ալ պարտի սակայն ամբողջական ըլլալ, և իր իմացական կրթութեան մասը՝ մեզ համար՝ պարտի պարունակել, մայրենի լեզուի եւ օսմաներէնի տարերց ուսումէն զատ, տարրական թուաբանութիւն ու տարրական երկրաչափութիւն, բնական գիտութեանց տարերքն, պատմական եւ աշխարհագրական ծանօթութիւններ:

Կազմական կանոնադրոյ ժ յօդուածը կուտայ մանրամասնութիւնքն: Արդ եւ ո՛չ մին այս առարկայներէ կարելի է զեղչել առանց վնասելու մանուկներու ազագային և հետեւապէս առանց թերանալու մեր ծնողական ու վարչական պարտականութեանց:

Ուրեմն մտադրեալ խնայողութիւնք պարտին ըլլալ այս ուղղութեամբ, այնպէս որ և ոչ մէկ թաղի մանուկներ զըրկուին գէթ տարրական նախակրթութենէ, որ, օրինաւորապէս աւանդուելու համար, դարձեալ չի պահանջեր նուազ խնամք ու հոգ դպրոցաց խնամակալ մարմնոց կողմանէ: Միայն թէ մենք համոզուած եմք որ երբ թաղ, Խորհուրդք և Հոգաբարձութիւնք փոյթ ունենան ըմբռնելու և ճշգիւ գործադրելու Կազմական կանոնադրոյ տրամադրութիւնքն ի մասին նախակրթարանաց կազմակերպութեան, արդէն ծախուց վրայ զգալի խնայողութիւն մ'ինքնին գոյացած պիտի տեսնեն, արդեանց տեսակէտով աւելի օգտուելով հանգերմ:

Միշտ կը մնայ, այլուստ, Կեդրոնին պարտականութիւնը նպաստ ու դիւրութիւն հայթայթելու կարօտ աղքատիկ թաղերու որք բացարձակապէս անկարող ըլլան բաւելու տարրական նախակրթարանի մը ծախուց, (Կազմ. Կան. Յօդ. Բ.): Ու Կեդրոնին այս պարտքը ամենուն պարտքն ըսել է, Կեդրոնը ներկայացնելով ընդհանրութիւնը:

## ԼՈՒՐՔ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Պէտքերեան վարժարանի ամսվերջի հարցաքննութիւնք տեղի ունեցան յունիս 27էն մինչեւ յուլիս 3: Աւագաց եւ Երիցագունից դասարանք քննութիւն անցուցին, բաց ի Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն

եւ Յունարէն լեզուներէ, գծագրական եւ վերլուծական Երկրաչափութեան, Տիեզերագրութեան, Ելեկտրականութեան եւ Մագնիսականութեան, Քիմիական վերլուծութեան, Հանքաբանութեան, Առողջաբանութեան, Յայն, Լատին եւ Ֆրանսական մատենագրութեանց պատմութեան, Քաղաքակրթութեան եւ Ժամանակակից Պատմութեան, Քաղաքական Տնտեսութեան, Տրամաբանութեան, Բարոյագիտութեան, Տոմարակալութեան եւ Առեւտրական թղթակցութեան մէջ, Վերջին օրը, կիրակի, ուր արտասանութիւնք եւ լաւագոյն թիւ ստացող տարեկան դպրոցական շարադրութեանց ունանցընթերցմունք տեղի ունեցան, ի միջի այլոց Աւագներէն Պ. Մարտիրոս Նալպանտեան եւ Պ. Հրանտ Անդրէասեան կարդացին իրենց մէկ մէկ ընդարձակ շարադրութիւնը, առաջինը նիւթ առնելով «Գեղարուեստք եւ իրենց ազդեցութիւնը քաղաքակրթութեան վրայ», եւ երկրորդը «Զանձոյթի դեղը»։ Պ. Մարտիրոս Նալպանտեան կարդաց նաեւ Փրանսերէն լեզուով իր մէկ ընդարձակ գրութիւնը որուն նիւթն էր «Տպաւորութիւնք Ռասիին Դիւնիւն ընթերցումէն»։

Այս ուրբաթ, կէս օրէ յետոյ, դրպրոցական պարզ հանգէսով մը հարցաքննութեանց արդիւնքը ծանուցուեցան, կարգացուեցան Ա, Բ եւ Գ յիշատակութիւնք, պատուոյ մրցանակներ բաշխուեցան եւ շրջանաւարտներու վկայականները տրուեցան։ Ներկայ էին վարժարանին ուսուցիչները, շրջանաւարտ սաներուն ծնողքները, նախկին շրջանաւարտներէն ունաք, Հանդէսին կը նախագահէր Գեր. Տ. Մատթէոս Սրբազան Իգմիրլեան, եւ Հանրային կրթական Նախարարութեան կողմէ ներկայ կը գտնուէր Էսաադ պէյ։

Տնօրէնը ներկայացուց վարժարանին այս տարուան շրջանաւարտները որք վեց էին թուով։ Իրենց վկայականները մի առ մի իրենց յանձնելէ յետոյ, վերջին խրատական բանաստեղծութիւն մը ուղղեց իրենց, նիւթապաշտական եւ հոգեպաշտական վարդապետութեանց տարբերութիւնն ի

վեր հանելով, ցոյց տալով անհատին եւ ընկերութեան ուղղութեան վրայ առաջնին նուաստացուցիչ ու աղետալի, իսկ երկրորդին՝ ազնուացուցիչ ու շինիչ ներգործութիւնը, եւ յորդոր կարգալով գործնական կեանքին մէջ հաւատարիմ մնալ այն հոգեպաշտական սկզբունքներուն որոնցմով տոգորեց զիրենք իրենց ստացած դաստիարակութիւնը։ Շրջանաւարտներէն մին թարգմանն ըլլալով իր ընկերներուն՝ զգածեալ ուղերձով մը յայտնեց իրենց դպրոցական կեանքին այդ հոսկ վայրկենի տպաւորութիւնները։

Այս շրջանաւարտ վեց պարոններն են. Մարտիրոս Նալպանտեան, Սեբաստացի, Սեփիան Մէլմարեան, Աֆիօն-Գարահիսարցի,

Պօղոս Կարմիրեան, Կ. Պոլսեցի,  
Յարութիւն Ֆրէնկեան, Կ. Պոլսեցի,  
Գառնիկ Շէհրիկեան, Ատարազարցի,  
Հրանտ Անդրէասեան, Օրտուցի։

Սաներէն մին օսմաներէն լեզուով բարեմաղթական տաղ մը արտասանեց՝ ձօնեալ առ Վեհ. Սուլթանն, եւ Էսաադ պէյ, խօսք առնելով, համառօտ բանախօսութիւն մը ըրաւ ուսման կարեւորութեան վրայ եւ դրուատեց, երկրին կրթասէր Վեհապետին շնորհիւ, Օսմ. պետութեան այլ եւ այլ մասերուն մէջ իրագործուած կրթական յառաջդիմութիւններն, որոնք երախտագիտական պարտք մը կը դնեն իր ամէն կարգի հպատակներուն վրայ։

Ի վերջոյ խօսեցաւ Գեր. Տ. Իգմիրլեան Սրբազան, խորին հաւատք մը յայտնելով վարժարանին՝ ուսումնական եւ բարոյական կրկին տեսակէտներով՝ լուրջ եւ արդիւնալից ուղղութեանը վրայ, օրհնելով թափուած քրտինքն ու հասած պտուղները, եւ յետ բարեմաղթութեանց վասն կենաց Օգոստոսիառ Սուլթանին, տէրունական աղօթքով ու «պահպանիչ» ու կնքեց հանդէսը։



## ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մեզգուրեան վարժարանի տարեկան քննութիւնը որ յունիս 15ին սկսած էին, վերջացան յունիս 27ին: Յունիս 1ին վկայադիր տրուեցաւ վեց աշակերտուհեաց որք աւարտած են իրենց դպրոցական շրջանն եւ որոց անուանք ահաւասիկ:

Օր. Սոֆի Յ. Մաղնիսայեան էնկիրիցի

» Ասրիկէ Յ. Եազընեան էտիրնէցի

» Զարուհի Ն. Մեզգուրեան Կ. Պոլսեցի

» Հրաչիկէ Ն. Փանոսեան Կ. Պոլսեցի

» Ղեփիւռ Ն. Երէցեան Կ. Պոլսեցի

» Վերգիկէ Կ. Դերձակեան Թէքիրտաղցի


— Խարրերդէ յունիս 15 թուականաւ Արեւելի ուղղեալ նամակէ մը կը տեղեկանանք թէ Մալաթիոյ մէջ, որ Խարրերդի դուռն է, հետախտ ծագելուն պատճառաւ, ըստ կառավարական հրամանի, տեղւոյն բոլոր վարժարանք վաղուեր են, առանց քննութեան ու հանդէսի: Միայն ուսումնաւարտից վկայականք յանձնուած են իրենց: Կեդր. վարժարանը ունեցած է հինգ ուսումնաւարտ:

— Գայսէրիի Գեր. Առաջնորդն Պատրիարքարան զրկած է վիճակին Ս. Կարապետի վանուց մէջ հաստատեալ ժառանգաւորաց վարժարանի եօթներորդ տարեշրջանի տեղեկագիրն եւ քննութեանց վիճակացոյցը, որոնցմէ կ'երեւի թէ վարժարանն այս տարի եւս եօթը շրջանաւարտ ունեցած է, թէ վարժարանը կը գտնուի բարեկարգ վիճակի մէջ և հետզհետէ կ'աւելնայ թոշակաւոր աշակերտաց թիւը եւ թէ այժմ կը մնան վարժարանին մէջ 52 աշակերտք, որոց 8ը ժառանգաւոր եւ 44ը թոշակաւոր: Ինչպէս յայտնի է, այդ վարժարանին մէջ Ազն. Էստեան եղբարց նպաստիւք կ'ուսանին 20 ժառանգաւորներ որք կը կոչուին «Էստեան Սանունք»: Այս տարուան եօթը շրջանաւարտներն եւ անցեալ տարուան վեց շրջանաւարտներու հինգը թոշակաւոր են: Եւս աւելի այս տարի եւս վարժարանը պիտի ունենայ եօթը շրջանաւարտ ամէնքն ալ թոշակաւոր:

Ահաւասիկ այս տարուան շրջանաւարտներու անունները:

Արսաւէս Պ. Վարպեհեան Պէլէկէսի գիւղ  
Բարսեղ Գ. Թերգեան Գայսէրի  
Իսրայէլ Խ. Ասլանեան Մունճուսըն  
Միսաֆ Յ. Լաչիկեան Գայսէրի  
Յարութիւն Կ. Մզմեան Թավուսըն  
Միհրան Կ. Ասլանեան Մանճուսըն  
Յակոբ Դ. Բէնպէնեան Էֆէրէ

(Արեւել)



## ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՄԱՇԽՈՒԹԻՒՆ

Ամսոյս 7ին Սրբոց Թարգմանչաց Սահակայ եւ Մեսրոպայ տօնին առթիւ տեղի ունեցաւ Յ. Իզմիրեանց կտակի Գործադիր Յանձնաժողովոյ տարեկան վերջին նիստը, Ղալաթիոյ Եկեղեցւոյն Խորհրդարանին մէջ, եւ այս տարուան ներկայացեալ երկատիրութեանց վրայ պատուարժան քննչաց տեղեկութիւններն ինկատ առնելով, հետեւեալները պարգեւի արժանի դատուեցան:

1. Քսան Օսմ. ոսկի Հայոց պարբերական մամուլը անուն գործը Պ. Գարեգին Զ. Լեւոնեանի յԱղեքսանդրուպոլիս, որ կը պարունակէ 1794-1894 հայ լրագրութեան ամբողջութեան վրայ պատմական տեսութիւններ և ծանօթութիւններ եւ որոյ քննիչն էր Կ. Ս. Իսթիւճեան էֆէնտի:

2. Տսան Օսմ. ոսկի Հայք յեղիսարեքուպոլիս Դրանսիլվանիոյ անուն գործը Վեր. Գրիգոր Վ. Դովրիկեանի ի միաբանութենէ Միթիարեանց Վիեննայի, որոյ քննիչն էր Գեր. Տ. Մեքքեսեզեկ Արքեպիսկոպոս:

3. Տսան Օսմ. ոսկի Հայ քոչակեր անուն գործը Պ. Գրիգոր Խ. Վանցեանցի յԱխաթալաք, որոյ քննիչն էր Մ. Աղաբեկեան էֆէնտի:

4. Տսան Օսմ. ոսկի Անգիր դպրութեան եւ Առակի անուն գործը Արժ. Վահան Վ. Տէր Մինասեանի որոյ քննիչն էր Մ. Ասքանազ էֆէնտի:

Իսկ Դիւան եկեղեցական պատմութեան մերոյ կամ Սիւնոն Կարողիկոսի յիշատակարանը անուն գործը Արժ. Տ. Գիւտ Աղանեանց քահանայի ի Տփղիս, և Ազ-

դարսն ևնր պատմութեանց անուն գործը Պ. Ռոստոմբէզ Երզնկեանց Հաղորատեցւոյ, երկու կարեւոր աշխատութիւնք մնացին գալ տարւոյ քննութեան եւ մրցման:

Այս տարի մրցանակի արժանի չհամարուած գործերն են հետեւեալք.

Ա. Իիցարանոքիւն մեր, գործ Վեր. Սահակ Վ. Նազարէթեանի և քննադատեալ, Արժ. Տ. Եղիշէ Ծ. Վ. Դուրեանէ խորեւ գործ, զուրկ ի գիտական ճշդութեանց եւ ի գրական պահանջմանց:

Բ. Պատմութիւն հայ յրազրութեան, գործ Վեր. Գրիգորիս Վ. Գալէմբէրեանի, քննադատեալ ի Կ. Ս. Իսթիւճեանէ ֆէնտիէ եւ նկատեալ կիսկատար գործ:

Գ. Յուդակ հայերէն ձեռագրաց Վի. եննայի եւ Միւնիսէնի Կայս. Մատենադարանաց, գործ Վեր. Միարանից Միւթարեանց Վի. եննայի:

Դ. Կենսագրութիւն Պետրոս Դուրեանի գործ Տ. Հմայեակ Էքսէրճեանի նկատեալք իրրեւ ոչ յարմարագոյնք գրամագրութեանց Իզմիրեանց կտակին:

Սոյն գրական հանդէսն այս տարի թէպէտ անշուք կերպիւ կատարեցաւ, նոյն միջոցին պատահած երկրաշարժին պատճառաւ, բայց եւ այնպէս օրհնութեամբ յիշատակուեցաւ անուն կտակարար բարերարին Պ. Յովսէփայ Իզմիրեանց Դ. զլարեցւոյ:

— Ֆիլիպէէն յուլիս 1 թուականաւ կը գրեն Արեւելքի:

Տեղւոյս Ազգ. երկս. վարժարանաց 1893-94 դպրոցական տարւոյ հարցաքննութիւնք յունիս 13էն սկսելով՝ աւարտեցան 11 օրուան մէջ:

Ուրախալի էր տեսնել թէ աշակերտք զգալի յառաջդիմութիւններ բրած էին ուսմանց մէջ, մանաւանդ հայերէնի եւ գրագիտութեան մասին, յորս ուսանողաց յաջողականութիւնն իրապէս գովեստից արժանի էր. նոյնը կրնամք ըսել նաեւ պուլկարերէն և ֆրանսերէն լեզուաց համար: Այս ամէնը կապացուցանեն թէ՛ վարժարանը կը գտնուի այն բարեկարգութեան եւ ուղղութեան մէջ, որ կը պահանջուի զայն արդիւնաւոր գործելու համար: Տարակոյս չկայ թէ արդի կրթական բարեկարգ վիճակը պիտի շարունակէ յորչափ նորա վերայ հսկելու պաշտօն յանձնուած լինի գործօն եւ բանիմաց անձանց՝ որպիսիք են այժմ:

Հարցաքննութեանց աւարտումէն յետոյ, անցեալ կիրակի, յունիս 26, աշակերտաց

եւ աշակերտուհեաց մրցանակաց և վկայականաց բախման հանդէսը կատարուեցաւ նորակառոյց վարժատան մէջ, որոյ երկու միացեալ սրահները կը լեցնէր երկու սեռէ հոծ բազմութիւն, բնդ սրս կը գտնուէին նաեւ քաղաքիս Պ. Կառավարիչն եւ Ոստիկանագետն:

Աշակերտք եւ աշակերտուհիք իրենց ուսուցիչ և ուսուցչուհիներէ առաջնորդուելով սրահն մտնելէ յետոյ հանդէսն սկսաւ, եւ վարժարանաց Տնօրէնը Տիար Գարեգին Շիշմանեան երկուց վարժարանաց տեղեկագիրն ընթերցաւ, յորում յետ կարեւոր տեղեկութեանց, վեց ընթացաւարտ աշակերտներ կ'անուանէր, Պարտնայք Արամ Սահակեան, Ստեփան Բերովեան, Եփրատ Փափագեան, Միհրան Հինալեան, Գրիգոր Թօփաքալաշեան եւ Թագւոր Թագւորեան: Ասոնց զգօն վարմունքն ու ջանասիրութիւնը գրուածելով Տնօրէնը՝ յորդորական մը խօսեցաւ: Ապա իւրաքանչիւր կարգի աշակերտաց և աշակերտուհեաց վկայականաց և մրցանակաց բաշխում կատարուեցաւ, որոյ միջոցին զանազան կրթական ճառեր և տրամախօսութիւնք արտասանուեցան: Ի վերջոյ Հոգաբարձութեան Աստենապետ Տիար Գարեգին Թօգատլեան բանախօսութիւն մը ըրաւ, յիշեցնելով վարժարանի բարեկարգ վիճակին յարատեւ պահպանութեան համար ամէն կարեւոր միջոցներն, յայտնելով նաեւ թէ Հոգաբարձութիւնն որոշած է մանկապարտէզ մը հաստատել եւ թէ յաջորդ շրջաններու համար հարկ եղած է վարժարանի ծրագրին մէջ բարեփոխումներ նորմուծել, որպէս զի լաւ եւս համաձայնի պետական բարձրագոյն վարժարանին ծրագրին, ի գիւրութիւն աշակերտաց, որք յաւարտ շրջանի մեծ մասամբ այդ վարժարանը կը դիմեն:

Հանդէսն աւարտած լինելով՝ նախագահ Արժ. Տ. Արիտտակէս Հայրն իւր ներկայութեան հրաւիրեց ընթացաւարտ աշակերտներն եւ յորդորեց զանոնք ազգին օգտակար անհատներ ըլլալ եւ անմուսաց պահել իրենց սրտին մէջ վարժարանի յիշատակը:

— Ղալաթիոյ Նախարարի տրամադրող սկսած է Յուլիս 1 ին և կը տեւէ մինչեւ Օգոստոս 16: Տարեկան քննութիւնք յետաձգուած են նոյն թուականին:

— Դպրոցատէր Տիկնանց ընկերութեան վարժարանին արձակուրդը սկսած է և վերամուտը տեղի պիտի ունենայ սեպտեմբեր 1 ին:

— Բերայի մանկավարժուհիներու Կիրակնօրեայ վարժարանի դասախօսութիւնք դադարած են մինչեւ Սեպտեմբերի առաջին կիրակին։ Վերջնական քննութիւնք փոխանակ Հոկտեմբերի առաջին կիրակին՝ պիտի կատարուին Դեկտեմբերի վերջին կիրակին։

— Ի Մագրի-գիւղ Ներշապուհեան վարժարանի չէնքը մասամբ փլած և բոլորովին անընակելի դարձած ըլլալով, վարժարանին Հիմնադիր - Տնօրէնը Գարրիէլէֆ. Ներշապուհ չուզելով ընդհատել իւր խնամոց յանձնուած տղոց դաստիարակութեան գործը, բացօթեայ տեղ մը, վրանի մը տակ հաւաքելով զանոնք, կը կը շարունակէ դասախօսութիւնները։

### Ն Ե Ր Ք Ի Ն

— Բժշկական վարժարանի գինուորական ճիւղէն այս տարի 45 աշակերտք տօքթօրի վկայական ստացած են հարիւրապետի աստիճանով։

— Շերամարուծական վարժարաններ պիտի հաստատուին նաեւ Սէլանիկի, Ամասիայի և Ատալիայի մէջ որոց համար 888,065 զրչ. ծախք մը հաշուուած է և տարեկան մնայուն ծախքն ալ 62,250 զրչ։ Պետական խորհուրդը նկատողութեան առնելով Հանրագումար Շինութեանց Նախարարութեան առ այդ մատուցած տեղեկագիրը՝ օգտակար և ընդունելի դատած է։ Պատրաստուած տեղեկագիրը մատուցուած է Բարձր. Մեծ. Եպարքոսին։

— Երուսաղիմայ դաւառին մէջ բնակող Աշիրէթներու պետերուն զաւակներէն հինգ պատանիներ մայրաքաղաքս պիտի բերուին Աշիրէթներու վարժարանն ընդունուելու համար։

— Միւլբիյէ վարժարանի աշակերտաց թիւն աւելցած ըլլալով չէնքը անբաւական նկատուած և որոշուած է չէնքին վրայ յարկ մ'ալ աւելցնել։ Ձեռնհաս իշխանութիւնը քննութեան առած է յատակաձեւերն և տեղեկագրերը։

— Այս տարի մայրաքաղաքիս բարձրագոյն նախարկթարաններէն երեք հարիւրէ

աւելի երկսեռ աշակերտք վկայական ստացած են բարձրագոյն վարժարանները մտնելու համար։

— Բժշկական վարժարանի քաղաքային ճիւղի քննութիւնք աւարտած են և անասնաբուժական ճիւղի քննութիւնք պիտի աւարտին մի քանի օրէն։ Այս տարի տասնեւհինգ ուսանողներ տօքթօրութեան վկայական պիտի ստանան։

— Պրուսայի Միւլբիյէ երկրորդական վարժարանէն այս տարի չըջանաւարտելած են Կարապետ, Մէհմէտ Հիւմի, Մէհմէտ Վէյսի, Ռուբէն, Նիքօլաքի և Արթին Լֆէնտինները։

## ԶԱՆԱԶԱՆՔ

### ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԷՋԷՆ

ԴՊՐՈՑՆ՝ ՊԱՏՃԱՌ ԿԱՐՃԱՍԵՍՈՒԹԵԱՆ

Իրաւ։ Դպրոցը կարճատե՛ս կ'ընէ աշակերտն։

Թէպէտ վատատես, սակայն չեմ կարող ձայնակցիլ այն կարճատեաներու կարծեաց՝ որք դպրոցին և միայն դպրոցին կ'ուզեն վերագրել ակնոց կրողներու թուոյն արագ աճումը. որքա՛ն պատճառներ, որոց օտար է վարժարանն, պիտի կրնան գտնել այդ բողբոջարկուք, այս մասին, եթէ քիչ մ'աւելի անաչառ ըլլան իրենց դատաստանին մէջ։

Դպրոցին այս իրաւունքը ճանչնալէ ու պաշտպանիլէ վերջ, պէտք է խոստովանիլ, սակայն, թէ՛ այն բազմապիսի պատճառներուն մէջ որք ուղղակի կամ անուղղակի կերպով աշակերտին առողջութեան կը վնասեն, մեծ բաժին ունի տղայոց մարմնոյն դիրքը, մամուռապէս գիր գրելու ատեն. թէ, ապաքէն, դրպրոցն ինքն ալ մէկուն տեսողութիւնն է կարճեցուցած, միւսին ողնայարը կորացուցած, մէկ ուրիշին ընդհանուր առողջութիւնը խանգարած. դառն ճամարտութիւն, բայց ճամարտութիւն։

Ընդհանրապէս, գեղադրութեան դասի ատեն, դաստիարակն ուշադիր է — եթէ անոր ալ ուշադիր է միշտ — աւելի աշակերտին գրչին քան թէ մարմնոյ գիրքին, իսկ երբ տղայք ու եւէ գրաւոր դաս մը կը պատրաստեն, ո՛չ միայն ուշադիր է ոչ միւսին: Եթէ չէք համոզուիր, մտէք դասարան մը ուր աշակերտք գրելու պարապած են. մէկուն մարմինը գրասեղանին փակած է գլուխը գրեթէ տետրակին կը քսուի. միւսին ձախ բազկին արմուկը գրասեղանին մինչեւ ծայրը հասած է, մինչդեռ ձեռքը միակ յենարանն է աջ բազկին, վերջապէս, ի՞նչ գիտնամ, ամէն մէկը տուած է իւր մարմնոյն այն գիրքն՝ որ ո՛չ մասնագէտ մանկավարժի մը յանձնարարածն է ոչ բժշկի մը:

Մատաղ հասակի մէջ մարմինը չուտով կ'աճի: Արդ, եթէ աշակերտին մարմինն երկար ատեն մնայ անկանոն ու յոռի գիրքի մը մէջ, իւր անդամները ձեւէ կ'ենեն, ներքին գործարանները չեն կրնար զարգանալ, տեսողութիւնը կը խանգարի, աւողջութիւնը կը խաթարի:

Խնդիրն ա՛յնքան կարեւոր կը համարինք որ՝ թէպէտ Մաւիսի տնցեալ թուոյն մէջ յարգելի աշխատակցի մը կողմանէ պարզուած էին մանկավարժութեան պատուէրներն այս մասին, սակայն չենք վարանիր քիչ մ'աւելի մանրամասնորէն վերատրի յիշեցնել տնոնց մէջէն ամենէն գործնականներն, որոց պէտք է հետեւիլ ոչ թէ միայն գեղեցկագրութեան դասի, այլ և բոլոր գրաւոր դասերու պատրաստութեան ատեն. մէկ խօսքով, ամէն անգամ որ տղայն գիր կը գրէ:

Մարմինն ուղիւ բռնել, զրասեղանին ձիւղ դէմը և եզերքէն 2—3 սանդիմէդր հեռու. գլուխը քիչ մ'ընդ առաջ ծռել. ձախ նախաբազուկն ամրոջնովին սեղանին եզերքը դնել, ձեռքը տետրակին վարի մասին վրայ կրթնցնելով. աջ նախաբազկին կէսը սեղանին վրայ դնել. աջ սրունքն ուղիւ կախել և ձախ սրունքը քիչ մ'երկնցնել. տետրակը՝ գրասեղանին ե-

զերքին զուգահեռական մարմնոյն ձիւղ դէմը բռնել, որպէս զի աչքն ուղղակի ընդ առաջ նայի. ձախ ձեռքով, տետրակին ուղղել աջ, ձախ, վերի, վարի կողմը, այնպէս որ աջ ձեռքը կարելի եղածին չափ քիչ շարժի. աչքին և տետրակին կամ գրքին մէջտեղ 33—30 սանդիմէդր հեռաւորութիւն պահել. եթէ աշակերտն արդէն ա՛յնքան կարճատես է որ այս հեռաւորութեամբ չի կրնար կարդալ կամ գրել, հարկ է որ ակնոց դործածէ: — Ասոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ թէ՛ լոյսը պէտք է որ ձախէն ու ետեւէն գայ, և եթէ մէկ կողմէն կրնայ գալ՝ ձախ կողմէն: Արեւուն լուսոյ սաստկութիւնը պէտք է մեղմացուի վարագոյրներու, իսկ կանթեղներունը՝ լուսամտի տի միջոցաւ: — Գրասեղանը քիչ մը հակած ըլլալու է. նստարանն տախտակամածէն տղուն սրունքին բարձրութեան չափ վեր ըլլալու է: Գրասեղանին երեսը արմուկէն քիչ մ'աւելի բարձր մնալու է երբ տղան թեւերը կախէ նստած ատեն: Նստարանն յենարան ունենալու է: Տղուն ոտքերը գրասեղանին վարի կողմը հաստատուած տախտակի մը վրայ հանգչելու են: — Վերջապէս, գաղափարքին գրերը բաւական խոշոր ըլլալու են, այնպէս որ՝ սովորական լուսով՝ 40 սանդիմէդր հեռուէն կարենան դիւրաւ կարդացուիլ:

Այս պատուէրներն կէտ առ կէտ դործադրուելու են մանկավարտէզէն սկսեալ, որովհետեւ հոն ալ, այդ հաստատութեան մէջ՝ ուր ամէն ինչ պէտք էր մանկավարժութիւն ըսելով՝ բառին ամենէն ընդարձակ իմաստով, հոն ալ, դժբաղդաբար, մանկավարժական այս և խել մը ուրիշ սկզբունքներ գոյութիւն չունին: Այո՛, հոնկէ, մանկավարտէզէն պէտք է սկսիլ, որովհետեւ մէկ երկու տարուան ընթացքին մէջ ստացուած յոռի սովորութիւն մը ուղղել դարմանել դիւրի՞ն, կարելի՞ բան է: — Միւս կողմէն, ծնողք եւս յիշթ տալու են այս պատուէրներն իրենք ալ գործադրել տալու տան մէջ:

Քանի որ խօսքը գեղադրութեան դասի վրայ է, անդէպ չեն համարուիր անշուշտ այդ դասի աւանդման եղանակին վրայ քանի մը խօսք:

Այս մասին սովորաբար ընդունուած մէթոտն է, գոնէ Մանկավարտէզի և Տարրական շրջանի մէջ, գրատախտակին վրայ օրինակ մը գրել դասի ուսեւ, աշակերտաց աչաց առջեւ: Սակայն այս մէթոտն ամենէն մանկավարժական չի թուիր, եւ այս քանի մը պատճառներով:

Նախ, անոր համար որ օրինակ մը գրելը բաւական երկար ժամանակի կարօտ է, որ կրնայ ուրիշ բանի գործածուելու աւելի օգտակարապէս: Երկրորդ, եթէ դաստիարակուելին փորձ գեղադիր մը չէ, կ'ստիպուի ինչ ինչ տառեր աւելնու նորէն գրել մէկ, երկու և աւելի անգամներ, իսկ մը որ կը նուազեցնէ աշակերտաց՝ իւր վրայ ունեցած համարումն, և մենք, դաստիարակքս, գիտենք թէ ինչ մեծ արժէք ունի այն վստահութիւնն՝ զոր կրցած եմք ներշնչել մեր աշակերտաց: Վերջին և ամենէն գլխաւոր անտեղութիւնն ալ այն է որ՝ աշակերտք, որ այդ միջոցին ի հարկէ գրադած չեն, դաստիարակուելոյն՝ կանակն իրենց դարձուցած ըլլալէն օգուտ կը քաղեն դասարանը խանգարելու համար: Այս ամէն պատճառներով, թերեւս աւելի աղէկ, աւելի մանկավարժական ըլլայ օրինակն առաջուց գրել պատրաստել:

Սակայն, պիտի առարկուի, քանի որ մանկավարժականը կը հետազօտէք, պէտք չէ՞ որ աշակերտը տեսնէ թէ ուսուցիչն ի՞նչպէս, մասներու ի՞նչ շարժումներով կը կազմէ տառերը: Անշուշտ եթէ խնդիրը մէկ տառի կազմութիւնը ցուցնելու կամ զայն սրբագրելու վրայ է: Բայց երբ խնդիրն ամբողջ տողի մը վրայ է, այն տառն կը հաւատա՞յք թէ՞ օրինակը գրուելէ, ըմբռնելէ վերջ, աշակերտք կրնան յիշել թէ ուսուցիչը մատներն ի՞նչպէս խաղցուց՝ յօրինելու համար տառերու այդ երկար շարքն: Մնաց որ, օրինակը բացատրելու համար, ուսուցիչն կրնայ, երկնկէկ քանակի մը մի-

ջոցաւ, աշակերտաց ցուցնել կաւճին ըրած շարժումներն, տառին սկիւած ու վերջացած տեղը, քովի գրին հետ ի՞նչպէս միացած ըլլալը, թէ ո՛ւր պէտք է կտխել և ո՛ւր ձեռքը բարձրացնել, եւն:

Յ. Թ. ՀԻՆԴԵԱՆ

## Մ Ս Ա Ծ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՏԻՍԻՐՈՎԷԿԻ ԳՈՐԾԵՐԷՆ ՔԱՂՈՒԱՅ

Բեռդալոցցիի տեսլականը դաստիարակութիւնն էր, ո՛չ թէ ուսուցումը. բայց յաջս անոր՝ ամէն ուսուցում ունէր դաստիարակիչ զօրութիւն մը:

Ուսուցանելը՝ արգասաւորել է աւելի քան թէ սերմանել:

Մարդուն արժէքն իր սրտին մէջ է. իմացողութիւնը երբեք խանդ յառաջ չէ բերած. բնաւ մէկը առաքելի չէ ըրած. հոգւոյն զգացմանց մէջ կը ծլին բոլոր այն բարեմասնութիւնք որք դաստիարակը կը կազմեն:

Տուէ՛ք պատանեաց վարժապետներ որք իրենց խրատն ու համարը իրենցմէ հանեն ու չէ՛ թէ գրքերէն, և որք իրենց դասերուն մէջ ինքզինքնին տան ամբողջովին:

Այն մարդը որ տեսլական մը չունի, չպիտի կրնայ երբեք ռամկութենէ վեր բարձրանալ, ուր մնաց զայլս հոն բարձրացնել:

## ՄՐՅՄԱՆ ԴՐՈՒԱԾ

Պարզարանել Յորնաղի, լատին մեծ երգիծաբան բանաստեղծին, սա խօսքը ԱՄԵՆԱՄԵՆ ՅԱՐԳԱՆՔ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆՔ ՄԱՆԿԱՆ (Maxima debetur puero reverentia)

Գրութիւնք պարտին հասնել մեզ մինչեւ Օգոստոս 31:

ԱՌ ԸՆԹԵՐՅՈՂՍ

Նիւթոյ առատութեան պատճառաւ ստիպուեցանք Մասիսի ներկայ թուոյն մէջ զանց ընել Դասախօսական մասը:

ՄԱՍԻՍԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել Դատաւար Պատարժան Ոստիկանական Խորհրդոյ եւ ամէն վարժարանաց Տեսչութեանց թէ պատրաստ է դրկել իրենց Դաստիարակ—Ուսուցիչներ եւ Վարժուհիներ, Մասնագէտ—Դասասուներ եւ Ուսուցչուհիներ, ինչպէս նաեւ Օգնականներ, ըստ պահանջման Կազմ. Կանոնագրոյ եւ ըստ առաջարկեալ պայմանաց:

Կը ծանուցանէ նաեւ ամէն կարգի ազնիւ Ուսուցչաց եւ Ուսուցչուհեաց թէ պատրաստ է իրենց կարողութեան յարմար պատշտօններ հայրալքել իրենց Կ. Պոլսոյ կամ գաւառաց Ազգ. Վարժարանաց մէջ:

Մասիս մանկավարժական թերթի Տնօրէնութեանը այս դիւրութիւնը կը մատուցանէ կրթական պատշտօնէութեանց եւ պատշտօնէից

ԱՌԱՆՅ ՈՐ ԵՒ Է ՓՈԽԱՐԷՆՈՒԹԵԱՆ

Տեղեկութեանց համար դիմել առ Յ. Թ. Արամեան, Տնօրէն Մասիսի:

---

Խ Ն Դ Ր Ա Ն Ք

Ռումանիոյ Ազգ. Վարժարաններէն միոյն համար կը խնդրուի Ուսուցչուհի մը որ կարենայ դաստիասել Հայերէն եւ Զեւագիտութիւն: Վճարում գոհացուցիչ: Դիմել Մասիսի Տնօրէնութեան:

---

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Շնորհակալութեամբ ստացանք Մկրտիչ ԷՃ. Թիւրքիւնեանի «Ծածուկ մեղի մարդկային սեռի եւ կամ Ափրդիսական հիւանդութիւն» անուն գործն, հրատարակութիւն Պ. Պալենց գրասան, գին 4 դանեկան:

## ՄԱՍԻՍ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

1. Մանկավարժութիւն — Դաստիարակութեան գիտութեան ու պատմութեան, Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան վերաբերեալ յօդուածներ: — Մանկավարժական խնդրոց վրայ մրցման դրուած հարցումներ:

2. Դասախօսական — Նախակրթական տարւոյ դասեր: — Նախնական ու երկրորդական կրթութեան վերաբերեալ կարեւոր ու նոր դասընթացք, հրահանգք, եւ անշտ դասախօսութիւնք կամ ամփոփումներ դասուց: — Բացատրեալ ընթերցումներ:

3. Քննական — Դասագրոց արժանաւորութեան մասին քննադատական յօդուածք: — Վարժարանական այցելութեանց պաշտօնութիւնք:

4. Տնօրինութիւնք — Ուսումնական տնօրինող եւ Ազգային Վարչութեան իմաստն Ազգային Վարժարանաց:

5. Լուրք եւ տեղեկութիւնք — Ազգային, Ներքին եւ Արտաքին կրթական լուրեր եւ ծանօթութիւնք:

6. Զանազանք — Այլ եւ այլ շահեկան եւ հրահանգիչ գրութիւնք:



ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիսի տարեկան բաժանորդագրինն է, կանխիկ վճարելի, Կ. Պոլսոյ համար 40 դր. . իսկ գաւառաց համար 50 դր. . քոքասարի ծախսը մեր վրայ: Իւրաքանչիւր թերթի գինն է 2 դր.: Գաւառներէ բաժանորդագրի փոխարէն նամակագրուած եւս կ'ընդունուի 15% զեղչով: Բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ այլ ամէն խնդրոց համար պէժք է դիմել առ Տնօրէնն Յովնանէս Արամեան, Կեդրոնական գրաստուն, Կ. Պոլիս, Զամառնըլար թիւ 59: